39 ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 3945 1890 ՅՈՒԼԻՍ 15 ԿԻՐԱԿԻ

ՄԱՍԻՍ

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին։
Հասցէ՝ Կ. Պոլիս, Գալաթիա Ներատուսկեան խան։
Ցեռքէ կը ծախուի հատը 40 փարայ։

Բաժանորդագին
Պոլիս, տարեկան՝ ՈՒկ մէճիտ։
Գաւառները, մէկ քսանորդ ոսկի։
Օտար երկիրք, վեց ֆրանք։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 13 ՅՈՒԼԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աբէ-Էլ հաղորդեց Կեդրոնական վարժարանի տեսչի փոփոխութիւնն։ Երիտասարդ մը, Պ. Յարութիւն Մոսաիչեան, որ իր ուսումն աւարտած է Եւրոպայի համալսարանի մը մէջ — Օքսֆորտի համալսարանին մէջ — և որ ունի նիւթական լաւ վիճակ, ընդունած է այդ պաշտօն։ Ա-ւելորդ չէ ըսել որ Կեդրոնական վարժարանի խնամակալութիւնն ալ նոր պաշտօնեայն կ'անուանէ «տնօրէն» և ոչ թէ «կարգապահ» որպէս Երբեմն, թէպէտ պաշտօնը նոյն է։

Եթէ չեմ սխալիր առաջին անգամն է որ մեր մէջ այսպիսի նորութիւն մը երեւան կուգայ։ Ի Պոլիս չէ գտնուած անձ մը որ աշակերտած ըլլալով Եւրոպայի բարձր վարժարանի մը, ուզած ըլլայ ստանձնել կրթական պաշտօն։

Արարատ-Կովկասեան Հայերն ունին շատ անձեր որք եղած են Եւրոպական համալսարանէ և ունին կրթական պաշտօններ, սակայն այդ անձեր՝ տեսուչ թէ ուսուցիչ՝ մտած են համալսարան մասնաւորապէս մանկավարժ ըլլալու նպատակաւ, և ուսած են իրր ապրելու արուեստ մը, իսկ Պ. Մոսաիչեան համալսարան չէ գնացած մասնաւորապէս մանկավարժ ըլլալու համար, և ոչ ալ իր ապրուստը ճարելու համար դպրոցի տեսուչ կ'ըլլայ, նիւթական խնդիր մը չէ որ դինքը կը մղէ այդ պաշտօնի։ Այս է նորութիւնը։

Մղումը պարզապէս բարոյական է, և ժամանակի պահանջի նշան։ Աշխատիլ հանրութեան համար, զոհել եսականութիւնը միթէ բարոյական պահանջ չէ՞ մեր զարգացեալ երիտասարդներուն համար։

Այդ բարոյական պահանջի գոհացումտալու երկու գլխաւոր դպրոց կայ, կրթական պաշտօն, դրական պաշտօն։ Այդ միջոցներով միայն հնարաւոր է տարածել ժողովրդի մէջ նոր գաղափարներ, և պատրաստել նոր սերունդներ տոգորուած նոր գաղափարներով։

Այս կոչումն է որ դրական ասպարիզին մէջ նեռել տուաւ այնպիսի անձեր որք խմբագիր կամ դրագէտ ըլլալու հարկին մէջ չեն։

Այսօր ունինք այնպիսի դրագէտներ ու խմբագիրներ որք չեն խոնարհիր ո՛և է անձի, ո և է ժողովի, և իրենք զիրենք այնպէս անկախ կը նկատեն որպէս վաճառականներ, սակայն այդ անձեր՝ տեսուչ թէ ուսուցիչ՝ մտած են համալսարան մասնաւորապէս մանկավարժ ըլլալու նպատակաւ, և ուսած են իրր ապրելու արուեստ մը, իսկ Պ. Մոսաիչեան համալսարան չէ գնացած մասնաւորապէս մանկավարժ ըլլալու համար, և ոչ ալ իր ապրուստը ճարելու համար դպրոցի տեսուչ կ'ըլլայ, նիւթական խնդիր մը չէ որ դինքը կը մղէ այդ պաշտօնի։ Այս է նորութիւնը։

Մղումը պարզապէս բարոյական է, և ժամանակի պահանջի նշան։ Աշխատիլ հանրութեան համար, զոհել եսականութիւնը միթէ բարոյական պահանջ չէ՞ մեր զարգացեալ երիտասարդներուն համար։

Այդ բարոյական պահանջի գոհացումտալու երկու գլխաւոր դպրոց կայ, կրթական պաշտօն, դրական պաշտօն։ Այդ միջոցներով միայն հնարաւոր է տարածել ժողովրդի մէջ նոր գաղափարներ, և պատրաստել նոր սերունդներ տոգորուած նոր գաղափարներով։

Այս կոչումն է որ դրական ասպարիզին մէջ նեռել տուաւ այնպիսի անձեր որք խմբագիր կամ դրագէտ ըլլալու հարկին մէջ չեն։

Այսօր ունինք այնպիսի դրագէտներ ու խմբագիրներ որք չեն խոնարհիր ո՛և է անձի, ո և է ժողովի, և իրենք զիրենք այնպէս անկախ կը նկատեն որպէս վաճա-

ական կամ ազատ կոչուած ասպարէզի մէջ գտնուողները։

Կրթական ասպարէզն ալ եղած է կերպարանափոխ, ուսուցիչ եղան՝ տաղանդաւոր անձեր որք կը ճանչնան միանգամայն իրենց արժանապատուութիւնն։ Երբ տաղանդ ու արժանապատուութեան զգացում կը միանան պաշտօնի մը մէջ, այդ պաշտօն միշտ ակնածելի է։

Պ. Մոստիչեան մեծ ոյժ մը կը բերէ մեր կրթական պաշտօնէութեան։ Ամէն նախապաշարում կը կարկի այլեւս։ Ուռած, փքացած անձեր երբ արհամարհական կերպով խօսին կրթական պաշտօնեայներու վրայ, Պ. Մոստիչեան կեցած է իր օրինակովն ամէնքը լռեցնելու։

Ինչպէս այս օրինակէն ալ կը տեսնուի բաւական ժամանակէ ի վեր մեր ուսուցիչներն ու տեսուչները կը կերպարանափոխուին դէպի լաւը։ Երբ այս կողմէ գոհունակութիւն կ'զգանք, միւս կողմէ Արարատ–Կովկասէ ստացած մեր տեղեկութիւնները տխրազդեցիկ են։ Կրթական գործը կը խորտակուի, կը ջախջախուի։ Տ. Մակար Կաթողիկոսի կենսագրութիւնը գրողները պիտի կրնան ըսել. Նորին Վեհափառութեան կաթողիկոսութիւնը եղաւ՝ քանդումն ազգային կրթութեան և ազգային ուսուցչութեան։

Բանդուեցաւ ինչ որ չինած էին այն քան խնամքով ու խմաստութեամբ Մատթէոս և Գէորգ կաթողիկոսներն։ Ժողովուրդն էր եղած իր դպրոցներուն խնամակալն ու պահպանը։ Տ. Մակար կաթողիկոս խլեց ժողովրդէ այդ խնամակալութեան ու պահպանութեան հոգը։

Արդարեւ դպրոցները փակուած էին երբ Տ. Մակար Սրբազան կաթողիկոս եղաւ, սակայն իր օծումին օրը կ'սպասէր Նորին Վեհափառութիւնը որ աւետիս պիտի ընդունի թէ ջնջուած է այն օրէնք որ պատճառ եղած էր դպրոցներու փակումին։ Վեհափառ Կաթողիկոսն առանց այդ «աւետիս» ընդունելու կը փութայ օծուիլ, մինչդեռ եթէ սպասէր տարակոյս չկայ թէ դպրակրթութիւն չ'ընելու համար կը բարեփոխուէր 1884 փետրուարի մահաբեր օրէնքը։

Այս բաւ չէր. Կաթողիկոսն նոյն իսկ իրենց այս վիճակին մէջ դպրոցներն հետզհետէ տկարացնելու, ուսուցիչներն յուսահատեցնելու, եւ ուսուցչութեան ասպարէզն ատելի ընելու համար ինչ որ պէտք է ընել չմնայեր։

Մշկի մէջ հետեւեալ մի քանի տողերը շատ պերճախօս են։

«Լսում ենք, որ շատ արժանաւոր վար-
«ժապետներ ստիպուած հրաժարական են
«ուղում տալ հայոց դպրոցներում ծառա-
«յելու, անհնարին համարելով ծառայել
«այնքան չնչին վարձատրութեամբ, որը
«սահմանուած է նոր կանոնադրութեան
«մէջ։»

Ինչպէս կը տեսնուի այս լուրէն, նոյն իսկ իրենց այս վիճակին մէջ հայոց դպրոցները կրնան հրապուրիչ ըլլալ արժանաւոր վարժապետներու, սակայն Վեհ. Կաթողիկոսը այդ հրապոյրն կը զրկէ վարժապետները։

Տգիտաբար ըմբռնուած տնտեսագիտութիւն մը պիտի զրկէ դպրոցները «արժանաւոր վարժապետէ»։ Ի՞նչ ապագայ ուրեմն սպասել այդ խեղճ աշակերտներուն համար։ Ի՞նչ նշանակութիւն ունի ազգի մը զարգացումին համար քանի մը հազար ռուպլիի խնայողութիւն։

Շատ հաւանական է որ երբ քաջուին արժանաւոր ուսուցիչները բնականաբար անոնց պիտի յաջորդեն խեղճ ողորմելի մարդեր որոց ձեռքի մէջ կրթութիւնը այնքան պիտի ստորնանայ որ վերջապէս լաւագոյն պիտի համարուի այդ նախակրթարաններն ալ յանձնել ռուսաց կառավարութեան. ահա՛ ուր կ'երթայ կաթողիկոսի տնտեսական քաղաքականութիւնը։

Արարատ–Կովկասեան Հայերը մինչեւ ցարդ կը պանծային իրենց ուսուցիչներովն, ու կը ծպրէին մեր ուսուցիչները,

կարծելով թէ՝ Վասիլի օդն ու ջուրն է պատճառ տկար ուսուցիչներ ունենալու. պատճառը դրամական վարձատրութիւնն էր. յորմէհետէ Պոլիս ալ սկսաւ բաւական լաւ վճարել, մենք ալ ունինք այժմ լաւ ուսուցիչներ որոց թիւը աստիճանաբար կը շատնայ. այն օրն որ Արարատ-Կովկասեան հայերն ալ կ'սկսին խնայողութիւն ընել, անոնք ալ մեր նախկին տխուր վիճակին պիտի ենթարկին։ Մեղաւորն երկիրը չէ, մեղաւորը տնտեսագիտութիւնն է։

Կղերամիտ ու կուսակցական ոգի մը կ'առաջնորդէ կաթողիկոսին ու իր խորհրդականներուն. եկեղեցականներու վերին հսկողութեան յանձնուած են դըպրոցները. ազատական նախկին բոլոր օրէնքները ջնջուած են. յուսահատութիւնն ու չիոթութիւնը կը տիրէ։

Ահա ուրիշ տեղեկութիւն մըն ալ Մշոյէ.

«Հայոց դպրոցներից արձակված զա-«նազան վարժապետներ մեզ դիմելով՝ ու-«զում են իմանալ, թէ որտեղ և ինչպէս «պէտք է քննութիւն տալ վարժապետու-«թեան իրաւունք ձեռք բերելու համար։ «Առաջարկում ենք այդ պարոններին դի-«մել Հայոց դպրոցական բարձր վարչու-«թեանը այդ մասին տեղեկութիւններ «ստանալու համար։ Պէտք է ենթադրել, որ «այդ վարչութիւնը տեղեկութիւններ ու-«նի այդ մասին։

Այսպէս ահա խեղճ վարժապետները թափառական կը յածին, ո՞ւր դիմեն, ի՞նչ ընեն չեն գիտեր։

Կուսակցական ոգին այնքան կը տիրապետէ էջմիածնի մէջ որ մինչ մէկ կողմէ հրաժարական տալու կ'ստիպուին Սեդրաքեանց Արիստակէս եպիսկոպոսի պէս անձեր, միւս կողմէ Թիֆլիզի մէջ պաշտօնի կը կոչուին Եղիշէ քահանայի պէս անձեր։

Նախկին Գեղամեան Հայկունի անունով անձն է այդ Եղիշէ քահանան, որ ա՛ժմ Թիֆլիզի թեմական տեսուչ է. իբր թէ չկար աշխարհական մը այդ պաշտօնի արժանաւոր, և մի քահանայ որ իր աշխարհականութեան ժամանակ ատելի եղած էր, կը կոչուի այդ պաշտօնին։

Մեղո՞ւի դրական քննադատն էր այդ Հայկունին, որու քննադատական մեծ զէնքն էր մատնութիւնը։ Իր մատնագիտութիւնն էր հայերէն վէպերու մէջ փնտռուել ոգի մը որ կրնայ հակառակ Երեւելի ուսական կառավարութեան և զայն մատնանիշ ընել Մեղո՞ւի մէջ։

Այդ վէպեր կը տպագրուէին գրաքննութեան հրամանաւ, սակայն մատնիչ մը կարող է խեղաթիւրելով հեղինակի ոգին, տալ այդ տողերու այնպիսի իմաստ մը որ և ոչ իսկ հեղինակի մտքէն անցած է։

Հայկունի զզուելի եղած էր։

Բայց որո՞ւ.—ժողովրդին։

—Ժողովրդի՞ն։—Ի՞նչ է ժողովուրդը։

Երբ մի անձ կը վայելէ պաշտպանութիւնն Պ. Սիմէոնեանցի, Մեղո՞ւի նախկին խմբագրին, կաթողիկոսի այժմու աջ բազուկին, այլ եւս ժողովուրդը նշանակութիւն չունի կաթողիկոսի համար։

Դառնութիւնն ամէն սրտերու մէջ է. յուսահատութիւնը գրաւած է ամէն ոգիներ։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Պ. ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՑԻԻ ՀԵՏ

Նորայրը եկե՞ր էր։

Հիներուն համար, ուրախութեան ձայն մըն էր այս, հին օրերու բարեկամութիւնը և հասարակաց յիշատակները վերանորոգելու սրտալիր եռանդ մը։ Նորեկներուս համար, համակրութեան ու հետաքրքրութեան ինքնայորդոր բաղձանք մը գոհացնելու պէտքը։ Իր հոյակապ բառարանը միշտ մեր դրասեղանին վրայ, մըրքով կ'երեւակայէինք այն անձն որ, լեզուաքննութեան ու բանասիրութեան չոր ու ապերախտ աշխատութեանց մէջ կորսուած, «հեռու հիւսիսում», Սդոքհոլմի դորշ ու անարեւ երկնքին տակ, նախնեաց մատենագրութեան ալուցը մէջ խորասուզուած, կը ջանար անկիւ դուրս բերել նոր լոյսեր ու նոր ծանօթութիւններ։ Գիտէինք որ սասրերէնով կը զարաւէր, միշտ այն հաստատ համոզմամբ թէ Սգաթանգեղոս ու Փաւստոս Բիւզանդ սասրերէնէ թարգմանուած են։ Իր Բնաբերին առաջին երկու պրակներն ստացեր էինք, ձեռագիր ստուար տետրակներ՝ կրկնագրով ընդօրինակեալ՝ յորս նախնեաց մատենագրութեան մէջ անհմուտ գրչագրաց ձեռամբ սպրդած սխալները երեւան կը հանէր։ Մոսկուայի Գրականաց ու պարմանաց հանդէսին մէջ կարդացեր էինք իր հմտալից աշխատութիւնը, Ասողիկի պատմութեան նոր հրատարակութեան վրայ։ Այլ մանաւանդ իմացեր էինք թէ ընդարձակ դորձ մը կը պատրաստէ, որուն կը նուիրէ իր բոլոր ժամանակը, Նոթնէ+ վերնագրով, և որուն մէջ ցոյց կուտայ տասն հազարի չափ վրիպակներ որք կը գտնուին հայ մատենագրութեան մէջ, ոչ էտ դըրչագրաց երեսէն։ Այլազան տեսակէտներով ուրեմն հաճոյական էր գինքը տեսնել։

Ի Բերա, Օդէլ տը Պիզանոի մէջ տեսակցեցանք Տ. և Տիկին Նորայր Բիւզանդացւոյ հետ, Արփիար Արփիարեան, Տիգրան Արփիարեան և ես։

Շատ գեղեցիկ է Պ. Նորայրի թոլած տպաւորութիւնը։ Իր յաղթ ու պարթեւեան կազմուածքը, բարձրադիտակ գլուխը, դիմագծերուն հանդարտ լրջութիւնը՝ պատկառանք կ'ազդեն քեզ, զոր սակայն շուտ սրտաբաց մտերմութեան կը փոխեն լայն ու խոշոր աչուքներուն հեզահամբոյր նայուածքը և դէմքին ընդհանուր արտայայտութեան անխառն պարզութիւնը։ Ճակատը, բարձր ու լայնչի, կը յառաջանայ մինչեւ գլխուն կատարն, ուսկից գիշերային ոգնութիւնք և բանասէրի անդուլ յոգնութիւնք վտարած են մազերը։ Հազիւ ալեխառն սեւ մօրուք մը կը շրջանակէ իր դէմքն, և մօրուաց մէջէն շրթունքը կ'երեւին հաստ և առոյգ, աւելի եւս ի վեր հանելով ամբողջ դէմքին արտայայտած բարութիւնը։ Ձեռուքները գիրուկ ու թմբուլիկ, կը պահեն միշտ այն եզկ լեցունութիւնն որ անդ համբոյր մը դրոշմելու զգայնութիւնը կուտայ քեզի, և կը զարմանաս թէ ի՞նչպէս այնքան դիւրութեամբ կը շարժէ իր գրիչը, բանասէրի ծանրաշարժ ու ըմբոստ գրիչն, որ մեր ձեռուքներուն մէջ կապարի ծանրութիւն պիտի ունենար։

Տկ. Նորայր աւելի եւս կը քաղցրացնէ իր ամուսնոյն թոլած սրտալիր մտերմութեան և անկեղծ համակրութեան տպաւորութիւնը։ Կանոնաւոր դիմագծերով կլորակ դէմքին վրայ, մանր աչուքներ կը փայլին զուարթ ու աշխոյժ։ Թուխ մազերը թրթռուն խոպոպիքներով ցրուած են ճակտին վրայ։ Հայ կնոջ զգօն դէմքին բովանդակ բարութիւնը կ'արտայայտէ իր դիմագծութիւնը, և անմիջապէս կը յիշեմ անգլիացի բնախօսի մը վերջերս հրատարակած մէկ աշխատութիւնն, որով վիճակագրական հաշիւներով կ'ապացուցանէր թէ շատ ամուսնիք, տարիներ անցնելէ վերջ, իրարու դէմքերու արտայայտութիւնը կ'առնուն, թէեւ առաջուց իրարմէ բոլորովին տարբեր ըլլան դէմքով։ Տիկին Նորայր բոլորովին հայկական դէմք մը ունի, և իր ազգակիցներուն՝ Շուէտուհեաց մեծամասնութեան հակառակ, որք բոլորովին խարտեաշ են, ինք թուխ է։ Պարզ արդուզարդ մը ըրած է, և պարանոցին վրայ կը կրէ քայտ մը որուն վրայ հայերէն գրերով գրուած է ՆՈՐԱՅՐ։ Հայերէն չգիտեր, և ֆրանսերէնը սիրուն

չեշտ մը կ'առնու իր նուրբ ու ներդաշնակ ձայնին մէջ։

Ընդհանուր նիւթերու վրայ կը խօսակցինք նախ։ Շուէտի ստանին վրայ խօսք կը բացուի, և տիկինը կը գանգատի թէ երկու երեք տարիէ ի վեր արեւու երես տեսած չեն գրեթէ, կլիմային մէկ զարմանալի և անօրինակ փոփոխութեամբ։ Տիկինը հիացմամբ կը խօսի Պոլսոյ բնական գեղեցկութեանց վրայ. ինքը, արուեստագէտ,—որովհետեւ ճարտար լուսանկարիչ է,—ամէնէն աւելի կ'զգայ այդ գեղեցկութեանց բոլոր բանաստեղծութիւնը։ Նոյնպէս զմայլանքը կը յայտնէ այն այլազան տիպարներու մասին որոց մարդ ամէն քայլի կը հանդիպի ի Կ. Պոլիս, և կ'ըսէ թէ ժամերով անյագօրէն դիտած է մեր մուրացկաններուն ազդական դէմքը, յաւելով թէ ինչո՞ւ իր գործիները հեռը չեն՝ անոնց պատկերներն առնելու համար։

Յետոյ կը խօսինք Սդոքհոլմի Արեւելագիտաց Ժողովոյն վրայ, որ անցեալ տարի տեղի ունեցաւ, եւ որուն Պ. Նորայր չէ կրցած գործօն կերպով մասնակցիլ՝ իր տկարութեան պատճառաւ։ Պարսից պատուիրակին՝ Միրզա Մոհսին խանի քարտուղարը, Արդաքի խան Նէվրուզ, Սդոքհոլմի սրահներուն մէջ կատարեալ յաջողութիւն մը ունեցած և ամէնուն ուշը գրաւած է իր արեւելեան թուխ գեղեցկութեան համար։ Շուէտի քումայթ ու ոպիտակ տիկնայք սքանչացմամբ դիտած են հայազգի երիտասարդին սև մազերն ու թուխ դէմքը։ Պ. Նորայր եւս միշտ հիացմամբ կը դիտուի Սդոքհոլմի սրահներուն մէջ՝ իբր նմոյշ արեւելեան գեղեցկութեան։

Երկաթուղիով եկած են մայրաքաղաքս, կառախումբը Պէլօվա-Վաքարէլի ճամբուն վրայ գծէն դուրս ելեր է, բարեբաղդաբար առանց մարդու վնաս պատճառելու։ Ու Պ. Նորայր կ'ըսէ թէ ճամբորդութեան մէջ ուրիշ գիրք չէր առած հետը բայց եթէ Աւետարան մը, դրաբար Աւետարան մը, որ կառախմբին մէջ միակ ընթերցումն եղած է։

—Աւետարան չէի՞ք կարդացած դեռ, կ'ըսէ մեզմէ մէկը։

—Քանի՜ քանի՜ անգամներ. և սակայն միշտ կը կարդամ, ու ամէն անգամուն նոր բան մը կը գտնեմ մէջը սովրելիք։

Ու ալ խօսակցութիւնը կը մասնաւորենք լեզուի վրայ։ Պ. Նորայր լաւ խօսող մըն է, յստակ կերպով բացատրելով իր ներհուն գաղափարները, մանաւանդ այնպիսի մաքուր և քերականական հայերէնով մը որ ճիշդ բերանէն ելածին պէս կրնայ գրուիլ իբր օրինակ գեղեցիկ շարադրութեան։ Իր զանազան աշխատութեանց վրայ խօսելով կ'ըսէ։

—Բնաւէրէն երկու տետրակ միայն հրատարակեցի, որովհետեւ պէտք եղած քաջալերութիւնը չ'գտայ. իւրաքանչիւր պրակ հարիւր ֆրանքի կուգար ինձ, և եթէ հարիւր բաժանորդ միայն ունենայի, կրնայի հրատարակութիւնը շարունակել։ Բնագիրը ես կը գրէի մասնաւոր թանաքով մը, և յետոյ քարի վրայ փոխագրուելով, կ'ընդօրինակուէր։

—Կը ներէք, թանաք կ'ըսէք, մելան բառը չէ՞ք ընդունիր։

—Չէ՛, բայց մելանը յունական բառ է, որ, ինչպէս գիտէք, սեւ կը նշանակէ իսկ թանաքը հայերէն բառ է։

—Թանա՞քը ուսկից առնուած է։

—Իրաւ որ չեմ գիտեր, ո՛չ պարսկէն և ո՛չ արաբերէնի մէջ հանդիպած եմ այդ բառին։

Եւ յետոյ կը խօսի իր մեծ աշխատութեան, Նոխնէին վրայ։

—Իմ միակ զբաղումս է այն հիմակ։ Զբաղումէ աւելի բան մը, հաճոյք, ուրախութիւն։ Բոլոր ուշադրութիւնս կեդրոնացուցած եմ այդ երկին վրայ, և աս վստահութիւնը ունիմ որ աշխատութիւնս ապարդիւն չմնար։ Այսօր, տասն հազարի չափ վրիպակ գտած եմ մեր նախնեաց գրքերուն մէջ։ Եզնիկը, որով այսօր կը պարծենանք, այն վիճակին մէջ որով այսօր մեր ձեռքը կը գտնուի՝ անպիտան գործ մըն է։ Բոլոր էջերը տակնուվրայ են։ Կը հասկնաք անշուշտ. ինչպէս որ այսօր կազմարար մը ֆոտոֆանները սխալ կապելով՝ գործն անիմաստ բան մը պիտի ըլլար, այնպէս ալ՝ գրչագիրը սխալ կապած է իր ձեռքն ունեցած թերթերը։ Եզնիկը, մեր ձեռքն ունեցած Եզնիկը հասկնալու համար, 19րդ երեսէն սկսած է երթալ 32րդ երեսը, 50րդ էն 78րդը։ Ես յաջողած եմ կարգի դնել թերթերը, իմաստին հետեւելով, որ շատ ակներեւ է,

և սակայն դեռ շատ տեղեր կար որ մութ են, և կ'ենթադրեմ որ թերթեր պակաս են մեր ունեցած ձեռագիրներուն մէջ, որոց վրայ կատարուած է տպագրութիւնը։ Ագաթանգեղոսի մէջ միայն, երկու հարիւր վրիպակ գտած եմ։ Խորենացւոյն մէջ ալ, սխալներ ալ կան. օրինակի համար, տեղ մը, ՀԷՐՈՅ ՊՈՀԱԿԻՆ խօսքը, Փըրանսերէն թարգմանութեանց ու Հ. ԸՍտեփանէի աշխարհաբար թարգմանութեան մէջ ալ, ինչպէս նաեւ Գարագաշեանի Քննական պատմութեան մէջ, հասկցուած է իբր «պահակն», մինչդեռ ՀԷՐՈՅՆ աշխարհագրական անուն է, Կովկասի մէկ վայրին անունը, և պէտք էր թարգմանել Իւրոյ կիրճը։

Կը խոստովանիմ որ Պ. Նորայրի ի մէջ բերած բոլոր օրինակները տալու համար պէտք եղած հմտութիւնը կը պակսի ինձ, ուստի կը շարունակեմ իր ընդհանուր տեսութիւնները.

—Այո՛, սխալներ կը վխտան, և մինչեւ հիմա տպագրողներն անդրադարձած չեն։ Հին գրչագիրներ, ընտիր գրչագիր ունինք ի ձեռին։ Ընդօրինակողները տըգէտ մարդիկ եղած են յաճախ։ Միջոց մը կայ սակայն ճշդելու գտած վրիպակներս, այն է բաղդատել, կրկնագիր գրչագիրներուն դիմել։ Որովհետեւ մագաղաթը սուղ էր, վերջի դարուց ընդօրինակները կ'առնուին հին գրչագիրներ, արդէն գրուածը կը ջնջէին քիմիական բաղադրութեամբ և այսպէս նորէն կը գրէին իրենց ուզածը։ Վիեննայի վանքին մէջ այսպէս Ագաթանգեղոսի ընտիր օրինակ մը կար, որուն վրայ գրուած էր Ներսէս Լամբրոնացւոյ Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնը։ Որովհետեւ այս գործն այնչափ մեծ կարեւորութիւն ունեցող բան մը չէ, Վիեննայի միաբանութիւնը սկսած էր ջնջել Լամբրոնացւոյն գրութիւնը, ասոր տակէն երեւան բերելու համար Ագաթանգեղոսը։ Այն ատեն դիմեցի Վիեննայի Միաբանութեան, ներկայացնելով իմ գտած սխալները, և ուրախութեամբ իմացայ որ արդէն ջնջուած մասերուն հետ բաղդատելով իմ գտած չորս սխալներս ուղիղ էին, եւ ընտիր գրչագրութեան մէջ այնպէս ինչպէս ես ենթադրած էի։ Այն ատեն դրեցին ինձ թէ կը ջանային քիմիական այնպիսի զօրաւոր բաղադրութիւն մը գտնել որ բոլորովին ջնջէր վերջէն գրուածն. առջի գրուածին գրչի նշաններէն կարելի է բառերն հասկնալ։ Մեծ խնդիր մըն է այդ սխալներու խնդիրը։ Գարագաշեան այնպէս չպիտի գրէր իր Քննական Պատմութիւնը եթէ անթերի Խորենացի մը ունենայինք մեր ձեռքը. ինչպէս քիչ մը առաջ ըսի, Խորենացւոյն մէջ տեղեր կան որք չեն հասկցուիր և ատոր համար է որ յաճախ անհիմն քննադատութեանց տեղի կուտայ։

«Եւ սակայն դեռ ի՞նչքան աշխատութիւններ կան ընելիք հայ լեզուին վրայ։ Ինչ որ այսօր հայ լեզուին վրայ երեւան ելած է, գիտցէք որ ամբողջին մէկ չորրորդն է։ Իմ բառարանիս համար կ'ըսէք թէ հետամուտ չեմ եղած նոր բառեր յօրինելու։ Զէ՛, այդ գործը ուրիշներու կը թողում, որովհետեւ իմ հաստատ համոզումս է թէ այդ բառերը կան հայ լեզուին մէջ և մեզ ծանօթ չեն։ Վենետկոյ Մխիթարեանց վանքին մէջ անբաւ հարստութիւն կայ ձեռագիրներու, որք այնպէս կը մնան անդ անտիպ, և սակայն Մխիթարեանք ուրիշ հոգ չունին բայց եթէ Տանդէկամ Շէյքսպիր թարգմանել գրաբար լեզուաւ։ Մենք պէտք է համոզուինք թէ ա՛լ հիմակ կարելի չէ գրաբար գրել. ի՞նչպէս կ'ուզէք որ մեր գաղափարները, մտածումները, զգայումները կարենանք թափել կապապարի մը մէջ որ տասնեհինգ դար առաջ պատրաստուած է։ Ճաղակ Ոսկեդէն Դպրոցեան վրայ կարծիքս կը հարցունէք, Տէր Գուրգէնի գրելու եղանակին վրայ։ Է՛հ, կը գովեմ Տէր Գուրգէնի ջանքը, բայց չեմ հետեւիր իրեն։ Ոսկեդարու գրաբար գրելու համար Հ. Արսէն Բագրատունեաց հմտութիւնը պէտք է ունենալ, և Հ. Արսէնն ա՛լ եթէ բաղդատենք Ոսկեդարու գրիչներուն հետ...։ Ձեռագիրները պէտք է պրպտել, ատոնց մէջ է փնտռել. մեր լեզուն ճոխացնելու գաղտնիքը։ Պէտք է գտաւներ երթալ, որովհետեւ չէք գիտեր ի՞նչ գեղեցիկ բառեր կան պահուած Վանայ, Մշոյ, Ակնայ և ուրիշ տեղերու գաւառաբարբառներուն մէջ բառեր որք ուղղակի հինգերորդ դարէն կուգան։ Ես երբ բառարանս կը յօրինէի, կը դիմէի հայ գաւառացի կանանց՝ ճշդելու համար ինչ ինչ բառերու նշանակութիւնն որք մատե-

նագրութեան մէջ գործածուած են, եւ փնտուածս կը գտնէի անոնց քով։ Եւ սակայն, միջոցներս չեն ներեր ինձ պարապելու այդ ընդարձակ աշխատութեամբ։ Հապա քննած եմ Բարիզի Ազգային Մատենադարանը, Վենետիկոյ եւ Վիեննայի մատենադարանները, այլ պէտք է երթալ մանաւանդ յԷջմիածին, յԵրուսաղէմ, մեր միւս գլխաւոր վանքերն ուր դանձեր կան թաղուած։

Ըղձանքի մեծութեան ու զայն գոհացնելու անկարողութեան ի՜նչ սաստիկ յուզում մը նկարուած էր իր դէմքին վրայ։ Իր խոշոր և ցցուած աչուքները գոգցես իտէական աշխարհի մը մէջէն կը հետեւէին հեռաւոր պատկերի մը որուն չէր կրնար հասնիլ, և իր կծկուած շրթունքը կը յայտնէին սրտին ցաւը կսկծելի, զի չէր կարող ամբողջովին տիրանալ ամբողջ լեզուին, ի ձեւին ունենալ բոլոր այն բառերն ու բացատրութիւններն զորս հայ միտքն երկնած ու հայ շրթունքն արտաբերած են դարերու անհատնում յաջորդութեան մը մէջ, ու բոլո՜րն ալ ունենալ, բոլո՜րն ալ...

Իր աշխատութեանց վրայ խօսելով, կ'ըսէ։

—Ա՛լ ես ինքս չպիտի հրատարակեմ իմ գործերս։ ա՛լ անգամ մը չը պիտի կրկնեմ այն դառն փորձը զոր անգամ մը կրեցի։ Բառարանիս հատորները այնպէս երեսի վրայ մնացած են Պոլսոյ մէկ խանին մէջ ուր յատուկ սենեակ մը վարձած եմ անոնց համար և տարիներէ ի վեր վարձք կը վճարեմ։ Ուրիշներուն պէս շահադիտութիւն չունեցայ ժամն գրքեր հրատարակելու, ժամն բառգիրքներ և դասագիրքներ, անոնցմով դրամ շահելու համար։ Քննողներն համար, ինչպէս ըսի, իւրաքանչիւր պրակը 100 ֆրանքի ծախք կը պատճառէր ինձ և հազիւ 30 ֆրանքը կրնայի դանձել։ Հիմա Խորենացւոյն վրայ ընդարձակ աշխատութիւն մը պատրաստած եմ, մեկնութիւններով, ծանօթութիւններով, և սակայն չեմ ուզեր ես ինքս հրատարակել զայն, այլ պատրաստ եմ 6000 ֆրանքի փոխարէն ուրիշի մը յանձնել որ հրատարակէ։ Այսուհետեւ, այս եղանակաւ հրատարակութեան պիտի տամ աշխատութիւններս։

Մեր աշխարհաբարի զարգացման վերայ ահաւասիկ Պ. Նորայրի կարծիքը։

—Գրաբարը պէտք է մէկդի թողուլ, որովհետեւ ա՛լ կարելի չէ գրել այն լեզուով։ Աշխարհաբարի զարգացման համար, մասնաւոր բան մը չեմ կրնար ըսել, որովհետեւ իմ բոլոր ուսումնասիրութեանս առարկայն գրաբարն եւեթ ըրած եմ։ Իմ համոզումս է՝ սակայն թէ աշխարհաբարը պէտք է զարգանայ, իբրեն հիմ ունենալով գրաբարը։ Ամէն պարագայի մէջ, չեմ ընդունիր երբեք որ աշխարհաբարին նախատիպար ընդունուի Չիլինկիրեանի հայերէնը։ Ես հետաքրքրութիւն ունեցած եմ բնագրին հետ բաղդատելու Թլուորնեռուն թարգմանութիւնը, եւ ցաւօք տեսած եմ որ բնագրին բոլոր բանաստեղծութիւնը, գեղեցկութիւնը չարաչար կորսուած է թարգմանութեանը մէջ։ Ուր որ բնագիրը վսեմ է, թարգմանութիւնը բոլորովին տափակցուցած է զայն։ Մէկդի կը թողում ընդհանուր թարգմանութեան քմահաճ ու մտացածին հայերէնը։ «Ենթարկել» բառը քանիցս հանդիպելով թարգմանութեան մէջ, համբերութեամբ հաշուեցի թէ այդ բառը քանի՛ անգամ գործածուած էր, և գտայ որ եօթանասուն անգամ։ և բնագրին մէջ, այդ ամէն «ենթարկել»ին դէմ եօթանասուն անգամ տարբեր բառ գործածուած էր։ Ահաւասիկ անոնց գիտցած լեզուին ապքատութիւնը։

Ժամանակն անցած է արդէն այն հաճելի խօսակցութեանց մէջ, ու կը բաժնուինք իրմէ։

ԹԱՓԱՌԻԿ

ՍԵՆԱՍՏԱՆԻՆ ՇՈՒՐՋԸ

Առաջին յօդուածս Ս. Ղազարու վանքին առթիւ վերջացուցի Ս. Պետրոսի վանգակներու զօրանչումն, հիմա ելլելով քաղքէն կը մտնեմ Մենաստանին մէջ։

Ս. Մարկոսի ծովեզրէն, այսինքն քաղքին կեդրոնէն, երկթի կառուցեալով երեք քառորդ ժամի հեռաւորութիւն ունի Ս. Ղազարու վանքը։

Ծովն է այն դաշտ որու վրայ կը բարձրանայ կարմրաներկ վէրլ մը, կանանչագոյն բերոնիներով։ Լայնածաւալ պարտէզ մը ծովէն կ'անջատէ վէրլն։

Վանքի մեծ դուռն արեւմտքի դէմն է. շէնքին երկու մասերն իրարու քով գալով յօրինած են սուր անկիւն մը որ նաւահանգիստ է։ Այդ նաւահանգիստ կը բնայ պատսպարել չորս հինգ նաւակ։

Նաւահանգստին խորը մի խորշ կը ծառայէ իբր նաւատուն։ Հոն կը մնան վանքին նաւակներն որք կը կոչուին Այոլ, Նոբեկ, Աղնամաբ, Կոռոյ։ Կիլիկեան նաւահանգիստ մը կը յիշեցնէ Այոլ, իսկ միւս անուններն Վանտոսպեան յորջորջումներ, որք ամէն ըսելէ կենդանի կը պահպանեն այդ պանդուխտներու համար յիշատակներն տար աշխարհին։

Նաւահանգստին առջեւ է անձկածաւալ քարափիկը, զոր կ'անուանեն –ՆՎ, ծովեզր, ուր պէտք է երթալ վանք մտնելու կամ անոի դուրս ելլելու համար։ Ռիվայ դռնէն այցելուն կը տեսնէ երկայն անցք մը որ մաս կը կազմէ ֆոռ-կոռ-ին։

Վանքի արեւն մեծ շնչերակն է այդ ֆոռակոռ-ին. անոր մէջ կը շրջագայի վանքի կեանքը։ Զորս երկայն անցքեր կը պարփակեն քառակուսի պարտէզ մը. մարմարիոնը կը ծածկէ այդ անցքերն որոց քովընտի դռները կ'առաջնորդեն վանքին ամէն կողմերը։ Վարդապետ, աշակերտ, այցելու, ծառայ կը մտնեն ու կ'ելլեն, կ'ելլեն ու կը մտնեն այդ դռներէն։ Աստիճաններու վրայ, թաղարներու մէջ երփներանգ նուրբ ծաղիկներ կը պճնազարդեն անցքերն, և հրճուանք կ'ազդեն եթէ ոչ ականջներու, գէթ աչքերու։

Կամարակապ սենեակներ կը բաժնեն անցքերէն այդ պարտէզը, կամ պարտիզակն, որ թուի իբր բացօթեայ ջերմանոց մը։ Ամառ ու ձմեռ կանանչն անպակաս է հոն։ Հիմալայեան ոչխարն կը տարածէ իր չուքը տարաշխարհային բոյսերու վրայ որք՝ բարձրաբերձ ծառին բոլորը բոլորած, կարծես կը ներկայացնեն նահապետական ընտանիքի մը պատկերը։

Այդ պարտիզակն ու իր անցքերը վարդապետներու ճեմարանն է ամիսն ցերեկներն ու գիշերները։

Այցելուն երբ Ռիվայէն վանք կը մտնէ, աջ կողմը կը տեսնէ դուռ մը որու վրայ գրուած է portinajo, դռնապան։ Երկայնահասակ խուալացի մը, բաւական տարէց, ըուրջ դէմքով-ինչպէս սովոր են ունենալ ամէն կարեւոր պաշտօնեայներ, կը հանդիպի այդ խուցին մէջ որ շատ մաքուր է և կոկիկ կերպով զարդարուած,

Դռնապանը հագած է համազգեստ. ոսկեհուռ շերտեր կը զարդարեն իր գլխարկը։ Առաջին անգամ որ տեսայ զնա կարծեցի թէ այցելու խուալացի պաշտօնեայ մըն է. բայց երբ գլխարկը շատ խոնարհեցուց, եւ քամակն ալ բաւականէն աւելի թեքեց, ըմբռնեցի թէ սպասաւոր մըն է։ —Եւ ո՞չ ապաքէն ամէն ոսկեհուռ շերտ սպասաւորութեան վկայական է։

Այցելուն իր առաջին տպաւորութիւնը կ'առնէ դռնապանէն։ Առաջին տպաւորութիւն մը ոչ միայն երախայներու սրտին, այլ եւ օտար այցելուներու մտքին վրայ ալ կը մնայ անջնջելի. բնական է ուրեմն որ միաբանութիւնը խնամքով ընտրէ իր դռնապանն, և հոկէ անոր բնակարանի մաքրութեանն և արդուզարդին։

Դռնապանն է առաջին հիւրամեծարը որ կ'առաջնորդէ այցելուներուն հիւրընկալութեան նախասենեակն, զետեղուած քառակուսի անցքերէն մէկին ծայրը։ Հոն կ'սպասէ այցելուն մինչեւ որ դռնապանն երթայ կանչէ վարդապետ մը որ իբր տանտէր, ու գիշերն միանգամայն, կը պատրաստուի այցելուն։

Մինչեւ վարդապետին գալը ճանճրոյթ չզգար այցելուն, որ սիրաշոյժար կը նայի պատկերներուն որք կը զարդարեն հիւրասենեակը։ Ո՞րքան պատկերներ. պատկեր ձեզուն, պատկեր պատերուն վրայ, պատկեր մինչ իսկ դեռինը. զգուշութիւն պէտք է տոնակոխ չընելու համար պատկերներն։

Դոնապանը կուգայ վարդապետի մը ընկերակցութեամբ, ու յետոյ կը մեկնի, կ'երթայ իր պահականոցը։

Հիւրերու առաջնորդ վարդապետներն որոշուած են. գրեթէ միշտ տարէցները կը կոչուին այս պաշտօնի։ Խոհեմութիւնը կը պահանջէ զգոյշ պահել դեռաբուսիկ քերոբէներն կանացի ակնարկներու վորձանքէ։ Բայց երբ այցելուն եւ այցելուհին գերման են, ու չեն գիտեր այլ լեզու, անողոք հարկը կը պարտաւորէ դոնապանը դիմել երիտասարդի մը։ Գերմանական լեզուի ուսումը բացառութիւն է վանքի համար, քիչերը զայն գիտեն, մասնաւորապէս երիտասարդները, կամ մէկ երկու երիտասարդ, զայն կը սորվին։ Սակայն գերմաններէն գիտցող երիտասարդը միշտ թաղուած ըլլալով ծանրածանր հնագիտութեան մէջ ամէն ինչ թոռմած ու հնցած կ'երեւի անոր աչքին, նոյն իսկ մանկունակ կնոջ դէմքը։ Հիւրամեծար վարդապետին պաշտօնը տառապանքի պաշտօն է։ Օրը մի քանի անգամ, և երբեմն տասը անգամէն աւելի պէտք է ցցնել միւնոյն տեղերը, միւնոյն բաները, եւ ըսել միւնոյն խօսքերը. եւ այս միօրինակ տարին տասն երկու ամիս կը տեւէ։

Իսկ տառապանքը շատ աւելի մեծ է այն վարդապետներուն համար որք մասնաւորապէս կոչուած չեն այս պաշտօնին՝, բայց կը հարկադրուին զայն ալ կատարել։

Խեղճ վարդապետը զբաղած է իր ընթերցումովը կամ դրաւոր աշխատութեամբ, սկսած է գրել, կամ թէ իրեն այցելութեան եկած է Մուսան—ի տակաւին ի Վենետիկ պաշտօն կը մատուցանեն Մուսայի,— եւ ահա՛ դոնապանը դուռը կը զարնէ. այցելու եկած է. հրամեցէք կ'ըսէ։ —Եւ մուսան կը թռչի կ'երթայ. գաղափարները կը ցնդին. խեղճ վարդապետը եւ ոչ իսկ կրնայ թափել անպատեհ այցելուին գլխին իր սրտի դառնութիւնը։ Անուշ դէմք երեւիլ ու քաղաքավար, պարտաւորիչ հարկ է իրեն համար։

Կուգան ու կուգան ամէն ազգէ այցելուներ, մանաւանդ անգլիացիք. ամէնքն ալ գիտեն իրենց Պայռնը։

Բայց Պայռընէ աւելի կոնտոլավարն է որ կը մղէ օտարականը դէպ ի Ս. Ղազար։ Այցելութիւն մը հայոց վանքը կը ճարէ նաւավարին իր շաբաթական ապրուստը. նաւավարները կը շրջապատեն օտարականն ու կը քաշեն կը տանին զնա ի Ս. Ղազար։

Հնութեան այդ քաղքին մէջ նորալուր է օտարականին համար ա-ՄԷՆԷ, ա-ՄԷՆԷԷՆ, ա-ՄԷՆԷ, ԱՐԹՂԷ անուններ. ի լուր այդ անուններն կ'արթննան օտարականի մտքին մէջ նախապատմական, անդրջրհեղեղեան յիշատակներ. կարծես կը տեսնէ Տալանն ու Նոյ նահապետը. —Աստուածաշունչին մեղ մատուցած շօշափելի ծառայութիւնն այս է—։ Պէտք է երթալ տեսնել թէ ի՞նչ տեսակ արարածներ են, ի՞նչպէս կ'ապրին։

Եւ ապահովաբար շատերն յուսախաբ կը մնան։ Ոչինչ ասիական, ոչինչ տարօրինակ կը տեսնեն. եւրոպական կեանքով մեծցած մարդե՛ր. միայն կը մխիթարուին թէ դէմերնին ելլեն թուխ թուխ դէմքեր ու մօրուքներ, այս է միայն «ասիական տեղական գոյնը»։

Բայց երբ կ'երթան Դէյ՞ն, այն տեղն իրենց գաղափարները կը փոխուին։ Մէյն, միջավայրի սենեակ մըն է ապարանին դրան դէմ, հոն գրուած են վանքի գերքերէն շատերը, մասնաւորապէս պատկերազարդներն. պատմական, աշխարհագրական ճոխ հաւաքածոյ մը որ կը գրաւէ օտարականներու ուշադրութիւնը։

Հոն մեր պատկերներէն գաղափար կ'ստանայ Հայոց վրայ օտարականն որ ըզմեզ ընաւ չճանչնար։ Միշտ խորին տպաւորութիւն կը թողուն օտարականներու վրայ աշխարհագրական պատկերներն ու աւերակներու նկարներն։ Հայոց անցեալի վրայ նոր ու լաւ գաղափարով կը մեկնին վանքէն։ Մխիթարեանց մեզ մատուցած այս ծառայութիւնը պէտք չէ վրիպի մեր ուշադրութիւնէ։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

ՔԱՆԻ ՄԸ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Կ'ըսեն թէ ի՞նչու- ես մեռելներու դէմ կռիւ հրատարակած եմ։ Նիւթերս հիւանդոտ ախտաւոր մարդկութեան մը ծոցէն դուրս կը բերուին. հիւանդներէն կամ հիւանդանոցէն ի գերեզման քայլ մըն է միայն, ուստի հարկաւորաբար պիտի երթամ մեռելոց քունը վրդովելու։ Այդ նիւթերուն մէջ իմ դերս՝ պատմագրի պաշտօն է միայն, և ըստ այնմ անհրաժեշտ է որ քրքրեմ հիւանդանոցն ու գերեզմանոցը, բաւական է որ ստած չըլլամ, աղտոտած չըլլամ պատմութեանս սրբութիւնը։ Պէտք չէ դադրիմ փոշիները խառնելէ։ Եգիպտացիք ոչ միայն հասարակ, այլ և ծիրանիով հագուած և թագով պսակուած մեռելները կը դատէին ի խրատ ողջերուն, և ըստ քննաբանիչ, այս կարգադրութիւնը եգիպտական օրէնսդրութեան մէկ լաւագոյն մասն էր։ Պէտք է դատենք և մեք այն կեանքերը մանաւանդ որ ընդհանրութեան մը հետ գործ ունին, հրապարակի վրայ դընենք զանոնք իրենց իսկական մերկութեանը մէջ։ Մեռելի մը առաքինութիւններն եթէ հոչակել անտեղի չէ, անպատշաճ չէ նաեւ հրապարակագոյժ ընել անոր խոշո՛ր թերութիւնները։ Պատմութիւնը երկու կողմ ունի, -Ե- ու ՠՠՠ. եթէ ամեն գլուղ մէկ կողմ միայն բռնած ըլլար, այսօր ամեն կեանք և կամ ամեն դէպք բոլորովին սպիտակ կը տեսնէինք և կամ սե՛ւ ծայր ի ծայրէ։ Ահա թէ ի՞նչու մեռելներն անհանդիստ կ'ընեմ։

—=—

Նշանիկիս պատմութեան մէկ մասը, որ մութ թողուած էր, այսօր չափով մը ի լոյս հանեմ չմերժելու համար ընթերցողաց ոմանց աղաչանքը։—Թէ ի՞նչու բժշկապետն այդչափ արհամարհանօք վարուած էր. ի՛նչ բան ունեցած էր այդ որբ աղեկին հետ։—Մեծ պահոց մէջ որբանոցի տղայք սովորաբար պոէ ՝ՀԷբոՀոբ կ'ուտեն, մեղէն կը տրուի մի միայն հիւանդներու։ Կ'ըսուի թէ եղած են վարպետորդի տղայք որ հիւանդութիւն կեղծելով՝ հիւանդանոց եկած են մեղէն ուտելու համար, և ասկից տեսչի և բժշկաց մէջ այս կարծիքը գոյացած է թէ քառասնորդի մէջ որբանոցի տղայոց հիւանդութիւնը կեղծ է. մեր բժշկապետը ճիշդ այդ համոզմամբ այնպէս բիրտ վարուած էր Նշանիկի հետ։ Բայց՝ ներելի է՞ այս. 14 տարեկան ուսանող մը, որ թուղթ, գրիչ, դաս կը սիրէ իր կեանքէն աւելի, իր սրահը դիւրաւ չթողուր հիւանդներուն մէջ կոմեալու համար. ի՞նչու ձեռք չդնել միանգամ անոր քրտնած ճակտին վրայ, բազկերակը չքննել, աչքերը չզննել ուշադրութեամբ։ Այս ալ պէտք է ի գիտութիւն ըսել որ որբանոցի տղայք այս համոզումն ունեցած են թէ ո՛ր ուսանող Մեծ Պահոց մէջ հիւանդանոցն ելնէ, կը մեռնի. մեռած են շատեր՝ տեսչի և բժշկաց ոմանց համոզմանը զոհ երթալով. ուստի տղայք դիւրաւ յանձն չեն առնուր հիւանդանոցն ելնելու. և հէ՛նց այս պատճառաւ Նշանիկը դժուարութեամբ անկողին մտած էր հիւանդանոցի մէջ։

—=—

Աբէ-Էլ իր շաբաթ աւուր խմբագրականին մէջ կծու կծու քննադատութենէ մը կ'անցնէ մեր պանդուխտներու աւանդական զբաղումները զոր ի գործ կը դընեն այս ոստանին մէջ իբրեւ միջոց ապրուստի։ Մեր կեանքը պէտք է քննադատել իր ամէն թերութեանցը մէջ։ Ո՛վ չուզեր որ համալ՝ եւ բաղնիքներու մէջ անմօրուս պատանիներ չ'ունենայինք։ Բայց այդ կեանքերու մէջ կրնա՞ր ինքնին փոփոխութիւն մտնել, այս տեղ է դժուարութիւնը. և ըստ իս այլեւ այլ ցեղեր, որք պանդուխտ կը բնակին Պոլսոյ մէջ, թուրքը, քուրդը, մակեդոնացի մատնավաճառը, քարհատներու մէջ քրտնողը խարտալոյին, իրենց աւանդականութենէն դուրս եկած չեն, և իրաքանչիւրը կ'ընէ այսօր ինչ որ տեսած է հոս իր պապերուն ժամանակը։ Մեր տղայք չեն կրնար Մակեդոնացի պուլկար տղայոց պէս շալկել մածունն ու Եէ՛ղոբ ընելով անցնիլ փողոցէ փողոց. ի՞նչ կը շահին այդ խեղճերը ։—3—600 դահեկան տարեւոյ մէջ. կը շահին գործատերերը. ճիշդ մեր գործատէրերու կամ

ճարտարապետաց ոմանց պէս որք իրենց վարպետներուն կաշին ծակելով մինչեւ թոքերը կ'իջնեն արիւն ծծելու։ Զեն կըրնար զատտամիջոցի թուրքին պէս պ-ւ կէ-պէ ՊՐՈ-Ա ըսել ու շրջիլ և կամ պէտք չէ ալ ընեն այնպէս. ա՛յդ ալ «գրաստական» բան մը ըլլալէ անդին չանցնիր, տարբերութիւնը սա՛ է միայն որ մրգավաճառ թուրքը կողովն ունի կռնակին վրայ, իսկ մեր համալն իր՛ բեռնարձ ձողը և կամ համեստը։ —Քիչ մը թեթեւութիւն ունի.— իրաւ է. բայց պէտք է գիտել թէ ինչ որ է 40-50 քաշ բեռը Մամսին, նոյն է 3-400 քաշը մեր Սիմոնին։ Բանջարապա՞նք ի՛նչ են.—ողորմելի մարդիկ, կը բանին կը քրտնին ջուրին ու ցեխին մէջ քանի մը փող միայն կշտացնելու. ըսել թէ ատոնք միաք կը գործածեն իրենց մշակութեանը մէջ, խսպա՛ռ անտեղի է։ Հապա քո՞ւրդը.— ատոնց կերակրողք մեր վարպետներն են։ Արտեր ալ կը հնձեն եղեր, իրաւ է օրական 5-6 դահեկանի աշխատութիւն կ'ունենան հընձոց ամիսը։ Բայց տերտմի քուրդն ու մեր պանդուխտը պէտք չէ իրարու հետ համեմատել. քուրդը երջանիկ է եթէ կարող եղաւ երեք չորս հարիւր դրշ. դնել իր գրպանը. իսկ մեք չենք կրնար անով գոհ ըլլալ. պարտք ունինք, պարտք. վաշխառուին պիտի տանք, ուրիշի. պիտի տանք, աղային պիտի տանք, հօր ու մօր պարտք պիտի տանք, եղան, կովին, գոմշուն, իշուն, այծին, ոչխարին, այգիին, արտին պիտի տանք։ Այլազգի արհեստաւորներու պէս ալ չեն կարող ընել։ Հայ մը իր քոյրը կամ խարտեաշ դրացուհին չկրնար դնել ապարանք մը վնա իրրեւ միջոց գործածել իր և աղայի մը մէջ։

Աղքատներ ունինք փողոցներու մէջ։— ենթադրենք թէ ունենանք 40-50 հոգի որ թէեւ աշխատելու կարող, մուրով կ'ապրին։ Ամոթ իրենց, և տակայն մեծ իրաւունք մը չտար այս մեր համալին ենթեսին յանդիմանութիւն մը նետելու։ Երբեմն սերտատաց համալ մը կը կենար թէ-նէլէ՝ վերի դլուխը մուրալու։ Այս մարդը մէկ ոտք ունէր, միւսն իր արհեստին զոհ տուած. շատ մարդ տեսած է զնա, թէ ի՛նչպէս մուրացիկ վիճակին մէջ ալ ազնուութիւն կը փայլէր դէմքին վրայ։ Անհերեսութիւն բնաւ չունէր. «տո՛ւր» բառն ոչ ոք լսած է իր բերնէն, և տուողին այնպէս ազնուութիւն ցոյց կուտար որ չէիր կրնար գիտել թէ տո՞ւողն աւելի մեծ էր թէ առնողը։ Մեծ պահոց մինչեւ վերջին եօթնեակը այնտեղ կը տեսնէի, այնուհետեւ ա՛լ բնաւ չերեւցաւ, և չը գիտեմ թէ ո՞ղջ է հիմա թէ մեռած։ Իրմէ ցաւով տեղեկացած էի որ մեր մուրացիկ համալին ողորմած ձեռքերն օտարք եղած էին սովորաբար։ Մեղնէ ի բաց նետելով թիւ մը մուրացկաններու, որք արհեստ ըրած են մուրացածոյ կեանքը, ոտքը ձեռքը շարժող մարդ չունինք որ կամաւ այդ նուաստութեան դիջանի։ Տակաւին անցեալ շաբթու Աբէ-Եէլի խմբագրատունը կը տեսնէինք դաւառացի հայ մը, որուն մէկ ձեռքը կտրտած անպիտանացած էր, և հէքը մէկ ձեռքով կը գործէ, կ'աշխատի, և տուն տեղ կը նայի ինքզինքը պահելէ ետքը։

Գործաւորն ինքնին գրաստական կեանքէն չկրնար դուրս ելնել։ Դաւառացի տղեկ մը կուգայ հոս 12-14 տարեկան. իր պաշտպաններն են կամ հայրը կամ դրացի Թորոս աղբարը։ Անոնք բնականաբար սահմանուած են ընել տալ ինչ որ իրենց ձեռքն է կամ գիտեն. և ահա մէկ տարիէն տղեկը կամ բեռնակիր է կամ խոհանոցին մէկ անկիւնը աման լուացող, և կամ բաղնիքին մէջ աղտեղութեանց մաքրող։ Ընկերութիւնը պէտք է որ նը-պաստէ անոնց։ Մեք ի՞նչ ըրած ենք.— ոչինչ. դաւառացին այսօր իսկ կարդալ գրել չգիտէ. իր քահանան տգէտ, վարժապետը տգէտ, առաջնորդը տգէտ և կամ անգութ կաշառակուրծ մը։ Ընկերական այս պայմաններուն մէջ հարկաւորաբար կարելի չէր որ չեղլին տանդական սովորութիւններէ։ Զմուռնամ կլերակնօրեայ վարժարան մը, որու համար կ'ըսեն թէ 25 տարուան գոյութիւն ունի։ Ի՞նչ կ'ընեն.—ծերունի մը շատ անգամ կ'երթայ դաս կուտայ եղեր։ Այս, և տակայն տակաւին գոյութեան օրէն մինչեւ ցայսօր բարւոք փոփոխութիւն կրած չէ։ Գիտցուք թէ թուագիտութեան դաս պիտի առնէ կիրակոս աղբարը։ Ի՞նչ ընելու է. պէտք է տայ 15 դահեկան դասապիրք

մը գնելու, արքայութեան պատմութիւնն ուսանելու համար՝ 8 դահեկան, եւայլն ըստ կարգին։ Ասոնք ըլլալիք բան չեն այն կարգի մարդոց, որք ուսելիքն իսկ չեն ունենար շատ անգամ։ Ազգը չէ՞ր կարող 100 դիրք ի պահեստի դնել որպէսզի վճարումներէ ազատ մնային։ Նախորդ տարի երկու բալուցի գործաւորներու 10–20 դահեկանի դիրք կը տրուի՝ պայմանաւ որ յաջորդ կիւրակէն հատուցանեն։ Կը խոստանան։ բայց ի՞նչպէս կրնային հատուցանել՝ 3–4 ամիս գործի երես չտեսնելով։ Ուստի կ'երթան եւ ալ բնաւ չեն երեւիր՝ դիրքերն ու ամօթը մէկտեղ տանելով։ Սկզբնական շարժումը տակաւին չտուինք մեր դաստիարակներուն, մեր թերութիւնն է այդ, զոր պատմութիւնն օր մը մեր երեսին պիտի զարնէ ուժգին ապտակի մը պէս։

Պօլիս շատ բան կարող էր ընել։ Ով գիտէ ո՛ր թուականէն սկսեալ հաղարներ իբրեւ ծառայ մոռած են մեր ունեւորտանց մէջ։ Մեք գրինք զանոնք խոհանոցին մէջ, ամէն թեթեւ պակասի համար՝ կրակ թափեցինք անոնց գլխուն։ Եւ որովհետեւ անոնք կարօտ են, կամաց կամաց ամէն գաճուութեանց կը վարժուին։ ալային քէֆն ըրէ, հանրային քէֆն ըրէ, աղուն քէֆն ըրէ, աղջկան քէֆն ըրէ, ամէն նուաստութեանց ղիջում ըրէ, եւ, իբրեւ դերագոյն առաքինութիւն որ կը պահանջուի, եղի՛ր խուլ որ չլսես, համր որ բերան չբանար։ Այս կեանքը մահացում եղաւ կամ սպանութիւն մերայնոց նոյն իսկ մեր ձեռքով։ Իսկ եթէ ընդհակառակն դիտատ սրտով ընդունէինք զանոնք, կարդալ գրելու վարժեցնէինք, անձնագիտութեան եւ ինքնութեան գաղափարներն արթնցնէինք, այն օրէն ցայսօր քանի մը հարիւր հաղար չէնքով շընորհքով մարդիկ, իրենց հայրենի տնակը կը մոնէին։ Համալներէն, կրով եւ փայտով աշխատողներէն շատ աւելի ատորնագոյն մնացին անոնք որ մեր ունեւորտանց խոհանոցներուն մէջ նեստուեցան։ խաբեբայութիւն, անբարոյականութիւն, ամուսնական կենաց անհաստատմութիւն, ծառայող դասուն մէջ աւելի շատ տեսնուած են քան թէ մեր համալներուն մէջ, որք Բերայի կամ Կալաթայի խառնակեցիկ օդը կը ծծեն։ Լքեալ դասն ինքնին չը փոխուիր, սկզբնական շարժումը պէտք է տալ իրեն՝ գնտակին զարնող հրաղէնին թաթիկին պէս։

Ես ալ կը ցաւիմ տեսնելով խումբ խումբ մարդիկ, որ փողոցներու անկիւնը կը շարուին յուսահատ եւ կամ ճողեր դրած ուսերու վրայ՝ հեւալով քրտնելով զաւխիներները կ'ելլեն։ Կը ցաւիմ տեսնելով խոհարարներ, սեղանաւորդներ, վարպետներ, որք մոռած կոտ սրճարաններու դուռը կը նստին։ Եւ սակայն երբ քննադատել ուզեմ, չեմ ըսեր թէ դուք գրաստներ էք, աւանդական սովորութիւններէ չեղիլ չգիտէք, այլ կը նայիմ արդահատութեամբ, եւ յետոյ գլուխս շարժելով կ'ըսեմ թէ այս կեանքերու մէջ անհրաժեշտ է փոփոխութիւն դնել, եւ թէ ընկերութիւնը պարտաւոր է ունեցածէն տալ չ'ունեցողին։ Այս վիճակին մէջ եթէ 150 տարի ալ անցնի, համալ արհեստաւորք պիտի մնան իրենց աւանդական սովորութեանը մէջ, եւ քսեցի կամ սերասացի 14-16 տարեկան պատանիք բաղնեպաններու ձեռքը իբրեւ դրամագլուխ պիտի ծառայեն՝ անբարոյական յաճախորդներուն կողերը քրքրելու։

Եթէ պէտք է քննադատել, քննադատենք հոգեւորականը, քննադատենք խորհելու եւ գործելու կարող դասը, քննադատենք ունեւոր դասը։

ՀՐԱՆԴ

ԱԿԱՄԱՅ

(ԴԱՐՁԵԱԼ Պ. ԳՈՒՐԳԷՆ)

Հայրենիի Յունիս 23ի թիւին մէջ հրատարակեց Պ. Գուրգէն յօդուած մը որու վերնագիրն էր «Հ. Ղ. Ալիշան և իւր յոբելեան»։ Աւելորդ չէ ըսել մի քանի խօսք այդ յօդուածի մասին։

Հայ ազգը պէ՞տք էր որ տոներ Հ. Ալիշանի գրական գործունէութեան յոբելեանը։—Հ. Ալիշանի կաթոլիկութիւնը և կաթոլիկական համակրութիւնները կրնա՞ն մեզ արգելք ըլլալ մեր ազգային երախտագիտութիւնն անոր յայտնելու։

Եթէ Պ. Գուրգէն դնէր խնդիրն այս կուսանի վրայ և փաստաբանէր թէ՝ կաթոլիկ վարդապետ մը չունի իրաւունք, ինչ որ ալ ընէ, արժանանալու մեր երախտապարտութեան՝ կ'ըմբռնէինք այդ յօդուածի շարժառիթը։ Կողմնակից ըլլալով անտահման ազատութեան կարծիքի ու համոզումի, բնականաբար կը յարգէինք Պ. Գուրգէնի համոզումն ալ։ Բայց Պ. Գուրգէն կ'ընդունի թէ կարելի է տօնել,

առանց ո՛և է անպատեհութեան, Հ. Ա-
լիշանի գրական գործունէութեան յոբելեանը. սակայն կը կարծէ որ ժամանակագրական սխալ մը ենք ըրած. փոխանակ 1903ին տօնելու Հ. Ալիշանի յոբելեանը տօնած ենք 1890ին։ Տարբերութիւն մը չկայ Պ. Գուրգէնի և մեր միջև։

Առաջ բերենք Պ. Գուրգէնի խօսքերն։

«Եթէ իրօք Հ. Ալիշանի գրական գոր-
«ծունէութեան Յոբելեանն կատարել յայ-
«տարարէր Միաբանութիւնն յառաջադոյն,
«տարակոյս չկայ, հայ դպրութեան բոլոր
«աշխատաւորք և այլ բազմաթիւ ազգա-
«յինք այդ պատշաճագոյն առթիւ պիտի
«փութային համերաշխ զգացմամբք մաս-
«նակցիլ Յոբելեանին՝ սրտագին ողջունե-
«լով զՀ. Ալիշան որպէս ազգային բանաստեղծ,
«հոյակապ հայրենադէտ և հնախօս, այ-
«լով բազմաք հանդերձ։ Բայց այս ան-
«գամ այդ պատշաճութիւնն չէր ի հան-
«դիպի։ Մի թէ առի՞թ կը պակսէր առ մեծ
«աշխատաւորն եբաթոգրէբոբիէն։ յայտնելու.
«մի թէ, զորօրինակ, իւր անուան տարե-
«դարձն պատշաճ առիթ մը չէ՞ր իւր ա-
«շակերտաց և այլ հիացողաց՝ յայտնելու
«իւրեանց երախտագիտութիւն և շնոր-
«հաւորութիւններն առ այն որ ՀԷՆ ԷՐԱՆԻ։
«ստացած է, իբրեւ բազմավաստակ աշ-
«խատաւոր տոհմային պատմութեան և
«հայրենախօս երգիչ, հանրային շնորհա-
«կալեաց։»

Ինչպէս կը տեսնուի այս տողերէն, Պ. Գուրգէն ինքն ալ կ'ընդունի թէ «ազգային բանաստեղծը մեծ իրաւունք ունի ազգային երախտագիտութեան». ուրեմն հիմնական անհամաձայնութիւն մը չկայ Պ. Գուրգէնի և մեր միջև. ուստի չեմ գիտեր թէ ինչո՞ւ անհրաժեշտ հարկ մը կը տեսնէ պիս խրատելու թէ՝ «Ազգասի-
«րութիւնն պարտի լինել շրջահայեաց,
«լուսամիտ խորհրդովք օժտեալ։ Որք կը
«նուիրեն զանձինս Ազգին բարւոյն՝ պար-
«տին լինել ո՛չ միայն ազգասէր, այլ և
«զգօն, արթուն և ամենատես։»

Հիմնական անհամաձայնութիւններս թուականի խնդրին վրայ է։ Պ. Գուրգէն կը կարծէ թէ՝ Հ. Ալիշանի գրական գործունէութիւն կ'սկսի 1853 թուականին, հետեւաբար յիսնամեակն այդ գործունէութեան կը բոլորի 1903ին, ուրեմն պէտք էր սպասել տակաւին տասն երեք տարի։

Պ. Գուրգէն մի քիչ ուշ մնացած է այս կարեւոր տեղեկութիւնը մեզ հաղորդելու համար։ Յոբելեանը կատարեցինք Մայիս 13ին և Պ. Գուրգէն իր զեկուցումը կ'ընէ Յունիս 23ին։

Պ. Գուրգէն առիթ ունէր մեր «սխալը» նախապէս մեզ ծանուցանելու։ Այս տարի ձմեռն երբ Նար-Պէյ սրբազան հիւանդ կը մնար Օրթագեղ, կիրակի իրիկուն մը Պ. Գուրգէն և ես գտնուեցանք անոր քով. Պ. Գարագաշեանի յոբելեանի վրայ խօսուեցաւ. այս առթիւ Պ. Գուրգէն ինձ յիշեցուց թէ՝ մի քանի տարէն պիտի բոլորի Հ. Ալիշանի յոբելեանն ալ, ուստի պէտք էր Մասնախումբ մը կազմել և աշխատիլ փառաւոր հանդէս կատարելու համար։ «Թէպէտև, ըսաւ, Հ. Ալիշանի գրած հայերէնն հայերէն չէ, բայց և այնպէս դնա պէտք է տօնել իբր պատմաբան և իբր բանաստեղծ։» Պ. Գուրգէն առաջարկեց որ այդ Մասնախմբին նախագահէ Տ. Խորէն Սրբազան. Սրբազանն ալ իր հաճութիւնը տուաւ։ Սակայն ես դիտողութիւն ըրի թէ՝ թերեւս լաւագոյն համարուի որ մասնաժողովն աշխարհականներէ միայն բաղկանայ. և թէ՝ այդ պիսի մասնաժողով մը արդէն կը պատրաստուի։—Խօսքն այս տեղ վերջացաւ. լաւագոյն չէ՞ր ըլլար որ Պ. Գուրգէն ինք այն օրն յիշեցներ թէ՝ տակաւին տասներեք տարիներ պէտք են որպէսզի կարեւանք կատարել Հ. Ալիշանի գրական գործունէութեան յիսնամեակը։

Բայց արդեօք ըրա՞ծ ենք այդ ժամանակագրական սխալը։ Չեմ կարծեր. Հ. Ալիշան կ'աշխատակցէր Բազմավէպին, հէնց անոր հրատարակուելու օրէն. և Բազմավէպ հրատարակեցաւ 1843ին. ուրեմն արդէն տասը տարիներու տարբերութիւն մը կայ Պ. Գուրգէնի ցոյց տուած թուականէն։ Սակայն այդ թուականէն առաջ ալ նոյն իսկ 1840ին Հ. Ղեւոնդ Ալիշան գրած է ոտանաւորներ, հետեւաբար անոր գրական գործունէութիւնը կ'սկսի 1840ին։

Բայց ենթադրելով իսկ թէ՝ Հ. Ալիշան, վարդապետ ձեռնադրուելէն մինչեւ տասներեք տարի ոչինչ գրած ըլլայ, այն տեղն մենք ալ տօնած կ'ըլլանք անոր երեսուն և եօթնամեակը, փոխանակ յիսնամեակին։

Անհրաժեշտ պարտականութիւն չէ յիսնամեակը միայն տօնել, կը տօնեն քսան և հինգամեակը, կը տօնեն երեսնամեակ և այլն։ Հ. Ալիշան անցուցած է եօթանասունը. մարդկային հաշուով դուցէ չ'ապրի տակաւին տասներեք տարի ալ, հետեւաբար փութացած կ'ըլլանք յայտնել մեր ջերմ երախտագիտութիւնն երբ ժամանակ ունինք։ Սակայն մեզ համար 1890ին բոլորած է Հ. Ալիշանի գրական գործունէութեան յիսնամեակը։

Երբ Պ. Գուրգէն կը յարուցանէ թուականի խնդիր, իր նպատակն է ցոյց տալ թէ մենք շնորհաւորած ենք Հ. Ալիշանի վարդապետ ձեռնադրուելուն յիսնամեակը, հետեւաբար մենէ համար կը պահանջէ թէ՝ «ի՞նչ կը նշանակէր հռովմէական «եկեղեցւոյ պատկանեալ քահանայի մը «ձեռնադրութեան հանդիսին՝ իբրեւ Հա«յաստանեայց եկեղեցւոյ անդամ՝ ներ«կայ լինել և գրական յոբելեանի պարոյա«կոս շնորհաւորութիւն յայտնել, և այն՝ յանուն Հայ հասարակութեան մայրաքաղաքիս։»

Նախ այն ըսեմ որ ես չեմ շնորհաւորած Հ. Ալիշանն յանուն հայ հասարակութիւն Պոլսի—քիչ մը վերջ այս կէտ կը բացատրեմ։—

Պ. Գուրգէն կրնայ ապահով ըլլալ թէ ես և ինձ նմաններն իրենց կարծիքն յայտնելու քաջութիւնն ունին, առանց իրենց մտքէն անցնելու թէ՝ ի՞նչ պիտի ըսեն Պարոնայք Գուրգէններ և նմաններ, և նոյն իսկ ընդհանրութիւնը։ Եթէ գուգադիպութիւն չըլլար Հ. Ալիշանի գրական և քահանայական յոբելեանի, ես դարձեալ պիտի շնորհաւորէի զինքն. ապահով եմ թէ այսպէս պիտի ընէին բազմութիւն հայեր, եկեղեցական թէ աշխարհական։

Ազգային մեր երախտապարտութիւնն ու շնորհակալութիւնն Հ. Ալիշանինն է. ամէն թուական լաւ է ազնիւ գործ մը ընելու համար։ Ջեմ գիտեր թէ ի՞նչու Պ. Գուրգէն համար չպահանջեր մեր Պատրիարքարանէն, երբ զուտ կրօնական առիթներով շնորհաւորութիւններ կ'ըլլան կաթոլիկ Հայոց Պատրիարքարանի։

Սակայն ընդհանուր հայ ազգն շնորհաւորեց Հ. Ալիշանի գրական գործունէութիւնը, որ երբեք չբաժնուիր անոր քահանայական կոչումէն։

Հաստատելու համար թէ՝ այդ հանդէս չունէր ազգային հանդամանք Պ. Գուրգէն կը յայտարարէ.

«Հանդէսն զուտ կրօնական էր ըստ «բնութեան, և չկարէր երբեք լինել ազ«գային, թող թէ համազգային։ Կարդի«նալ ոք, յանուն Ս. Պապին, և Գեր. Ա«զարեան Պատրիարք, յանուն «հօտին «փոքու՝ այլ ընտրելոյ,» կը շնորհաւորեն «իրենց վարդապետաց քահանայութեան «յիսնամեակն առանձին թղթովք. ահա «յայտնի ապացոյցք թէ այդ հանդէսն «էր լոկ եկեղեցական, առանց երբեք ազ«գային հանդամանաց, և պատկանեալ «միա՛յն և միայն «հօտին փոքու՝ այլընտ«ելոյ»։

Տարակոյս չկայ թէ՝ հանդէսը թէ՛ կրօնական էր և թէ՛ գրական։ Պապն ու Տ. Ազարեան Պատրիարք կրնան շնորհաւորել զՀ. Ալիշան իբր կրօնաւոր,—և կրօնական պէտերու կողմէ այսպիսի շնորհաւորութիւն մը անշուշտ անբնական չը թուիր—բայց այդ շնորհաւորութիւններ չեն ոչնչացներ հանդիսին ազգային և գրական հանդամանքը։ Մոլեռանդ կաթոլիկներ, օրինակի համար գոլէճցի վարդապետներ միթէ չէ՞ն կրնար իրենք ալ ըսել Գուրգէնեան տրամաբանութեամբ այդ հանդիսին համար թէ՝ «հանդէսն զուտ ազգային էր ըստ բնութեան, և չկարէր երբեք լինել կրօնական, թող թէ համակրօնական» և իբր ապացոյց ըսեր թէ՝ հերետիկոս եպիսկոպոսներ (այսինքն հայադաւաններ) հերետիկոս աշխարհականներ շնորհաւորեցին զՀ. Ալիշան հարիւրաւոր հեռագիրներով, հերետիկոսական այսքան շնորհաւորութիւններ են «յայտնի ապացոյցք թէ այդ հանդէսն էր լոկ ազգային, առանց երբեք կրօնական հանդամանաց»։

Եթէ մեր շնորհաւորութիւններ չեն չքացներ այդ հանդիսի կրօնական հանդամանքը, բնականաբար չեն չքացներ անոր ազգային-գրական հանդամանքն ալ Պապին և Տ. Ազարեան Պատրիարքին շնորհաւորութիւններն։

Պ. Գուրգէնի երկրորդ փաստն թէ՝ զուտ կրօնական է Հ. Ալիշանի յոբելեանի հանդէսն, հիմնուած է Բոլշէվիկին վրայ։

Կ'ըսէ թէ՝ «Մխիթարեան Միաբանու«թիւնը չէր ծանուցած «գրական գոր-

«ծունկուԹեան յոբելեան»։—ԹԷ՝ «հար-«կաւ միաբանուԹիւնն ի պաշտօնէ կը ծա-«նուցանէր զայն կանխաւ, եԹէ իրօք կա-«տարէր նորա գրական գործունէուԹեան «յոբելեանն» —ուրեմն կը հետեւցնէ Պ. «Գուրգէն «այդպէս չէր գործն, որպէս «կը յայտարարէ անագան ուրեմն և Ար-«փիար Էֆէնտի. գրական յոբելեանն գո-«յուԹիւն ունէր միայն երեւակայուԹեան «մէջ։»

Մայիս 14ին կը գրէի Վենետիկէ.

«ՄխիԹարեան միաբանուԹիւնը կը «կատարէ քահանայական յոբելեան և ոչ «ԹԷ գրական ու գիտական յոբելեան։ Այն «վարդապետներն՝ որոց քահանայ ձեռ-«նադրուելու յիսնամեակը բոլորուած է, «կը տօնուին իբր յոբելեար։ Վանքին հա-«մար խարուԹիւն չկայ այս ինչ վարդա-«պետին, այն ինչ վարդապետին միջեւ. «ամէն վարդապետ իբր քահանայ մի և «նոյն է։»

Եւ արդարեւ ՄխիԹարեան միաբանու-ԹիւնԹ չէ տօնած գրական յոբելեանն ո՛չ Հիւրմիւզեան եդուարդ եպիսկոպոսին, ո՛չ Բագրատունի Հ. Արսէն վարդապետին։ ՄիաբանուԹիւնն իր աւանդուԹեանը կը հետեւէր, ազգին անկ էր, եԹէ պատշաճ կը դատէր, տօնել նաեւ, առիԹէն օգ-տուելով, Հ. Ալիշանի գործունէուԹեան յոբելեանն ալ։ Առաջին անգամ Մշոկ առաջարկեց տօնել Հ. Ալիշանի գրական գործունէուԹեան յոբելեանն։

Ինձ բոլորովին անհասկանալի են «անա-անագան ուրեմն» բառերը։ Բաղմաֆէղ ար. դէն ծանուցած էր ԹԷ պիտի տօնուի Հ. Ալիշանի քահանայուԹեան յիսնամեակն. եԹէ ազգը հետամուտ եղաւ անպատճառ տօնել նաեւ այս առիԹիւ Հ. Ալիշանի ազ-գային-գրական յոբելեանը, մեղաւորն ո՛չ Բաղմաֆէղն է, ո՛չ ես, այլ Պ. Գուրգէն, որ նախապէս չուզեց վտանգին առջեւ առնուլ, բանը բանէն անցնելէ վերջ կը յի-շեցնէ մեզ Բաղմաֆէղը։

Կարծեմ ԹԷ բաւական սիրուն բան մըն է, այս առիԹիւ պատասխանել Պ. Գուր-գէնի նոյն իսկ էջէնց ԹերԹի պատասխա-նոնՀն, որու մասին իմ կողմէ կարծիք յայտ-նել աւելորդ է։

Աւասիկ ինչ որ կը հրատարակէր այս մասին Մայիսի Աբեռելեան Մամուլը.

«Միւսն՝ (Հ. Ալիշան) ԹԷեւ հնագար-«եան գրական ծանր ու նշանաւոր երկե-«րով բեռնաւորուած և ալէզարդ ճակտին «վրայ արդէն անմահուԹեան դրոշն տպա-«ւորուած, ազգային երախտագիտուԹեան «ո՛և է հրապարաոային ցոյցեր կը խորշէր, «ինչպէս որ տանէ պարՀ առաջ ծանուցուած էր «Բաղմաֆէղի մէջ, և միայն իր քահանայա-«կան ձեռնադրուԹեան յիսնամեակը կրօ-«նապէս տօնելու առաջարկը կ'ընդունէր։ «Ահա այդ արարողուԹիւնն առիԹ կ'ըն-«ծայէ Ազգին իր սրտեռանդն հիացման «հաւատիքը նուիրել Աւարայրի նահա-«պետին։»

Ահա նոյն իսկ իրենց ԹերԹի խոստո-վանուԹեամբը թող հասկնայ Պ. Գուր-գէն «ԹԷ ի՞նչպէս կարծեր են ոմանք ատ-և բաղում ազգայինք ի Ռուսիա՝ ԹԷ Ալի-շանի գրական գործունէուԹեան Յոբել-եանն է կատարուածն և ոչ ձեռնադրու-Թեանն ի քահանայուԹիւն։»

Խօսելով իմ պատուիրակուԹեանս մա-սին ի Վենետիկ, կ'ըսէ,

«Ուր (ի Վենետիկ) սակայն չգիտեմ որ-«պիսի յաւակնուԹեամբ ինքնընտիր ներ-«կայացուցիչ հանդիսանալով Կ. Պոլսոյ «Հայ հասարակուԹեան՝ ուղերձ մը կը «մատուցանէ, և կը խօսի իսկ ի հանդիսա-«կան ատենին, յայտարարելով ԹԷ «Պոլսի «Հայոց մէջ անսահման խանդ և ոգեւորու-«ԹիւնԹ կը տիրէ» (Յոբելեանին առիԹիւ) «և այլն։ Փափաքելի էր մեզ գիտել՝ ԹԷ «ո՞յք ոմանք են Կ. Պոլսոյ Հայ հասարա-«կուԹեան ներկայացուցիչ անուանեալք, «կամ նոյն ինքն Արփիար Էֆէնտի ազգա-«յին ո՞ր ժողովէն կարդեալ է որպէս «պատուիրակ հայ ժողովրդեան մայրաքա-«ղաքիս. ո՞վ տուած է նմա իշխանուԹիւն «յանուն հարիւր յիսուն հազար հայոց «բերան բանալ և խօսիլ ի հանդիսի՝ Հը-«հոմական քահանայի մը Յոբելեանին «առիԹիւ։ Զարմանա՞լ ԹԷ զայրանալ, չը «գիտեմք, այս նորալուր կատակերգու-«ԹեանՀ վրայ։

Կը ներէ՞ ինձ Պ. Գուրգէն հարցնել ԹԷ՝ այսպիսի դէպքերու պատուիրակ մը ղրկելու իրաւունքն ազգային ո՞ր ժողովը ունի. ո՞վ կուտայ պատուիրակին այդ իշ-խանուԹիւն։— Մենք այսպէս գիտենք ԹԷ՝ այսպիսի հանդէսներու համար կը

կազմուին մասնախումբեր, և ատոնք վըստահ ըլլալով իրենց հաստատակութեան մեծ մասի զգացումներուն, ըստ այնմ թարգման կը հանդիսանան այդ զգացումներուն։ Պ. Արծրունիի յոբելեանին առթիւ տեսանք թէ՝ զանազան քաղաքի հայեր ղրկած էին ի Թիֆլիզ պատգամաւոր կամ ուղերձ յանուն իրենց քաղքի հայ հասարակութեան. բնականաբար այդ հասարակութիւններու մէջ կային նաև Պ. Արծրունիի հակառակորդներ, սակայն պատգամաւոր կամ ուղերձ էին յանուն հայ հասարակութեան այդ քաղքին։ Ոչ մէկուն մտքէն անցաւ —զի հոն չկայ Գուրգէն մը— հարցնել այդ պատուիրակներուն թէ «ազգային ո՞ր ժողովէն կարգեալ են»։ Այսպէս կը պատահի նաև Եւրոպայի ամէն քաղաքներու մէջ ալ։

Ես չեմ ներկայացուցած զիս իբր ներկայացուցիչ Պոլսի հարիւր յիսուն «հազար Հայոց» եւ ոչ ալ «ինքնընտիր ըլլալու յատկութիւն» ունեցած եմ. — այսպէս ընելու համար պէտք է Պ. Գուրգէն ըլլալ։— Ահաւասիկ ինչ որ գրած եմ Արեւելք Մայիս 21ի թիւին մէջ, Վենետիկէն Մայիս 14 թուական գրած նամակով։

«Երբ կարգն եկաւ հանդէսի դռան աղ-«գայն մասին, երիտասարդ վարդապետ մը «կարդաց այն նամակ որով Պոլսի հայ հա-«սարակութեան մէջ Հ. Ալիշանի յոբել-«եանին համար կազմուած մասնախումբը «կը ծանուցանէր Մխիթարեանց Աբբայ «հօր թէ՝ Արփիար Արփիարեան ղրկուած «է իբր կողմէ իբր ներկայացուցիչը այդ «հանդէսին։»

«Այս դրէ վերջ Մանանդեան կոչեցեալ նէր-«կայացուցիչը կարդաց այն բարեմաղթու-«թեան գիր զոր ստորագրած էին բազմա-«թիւ հայեր։

Ինչպէս կը տեսնուի, ես իմ պաշտօնս նկատած եմ իբր Մասնախումբի մը ներկայացուցիչը եւ ոչ թէ ընդհանուր հայ հասարակութեան. ես ինքնընտիր չեմ եղած և ոչ ալ «ազգընտիր»։ մասնախմբին նամակը զիս կը ներկայացնէ իբր իր ներկայացուցիչը։ Բնականաբար անգամ մը որ իմ պաշտօնս ծանուցուեցաւ, ալ այնուհետև չէի կրնար միշտ ըսել «Պոլսի հայ հասարակութեան մէջ ևն. ևն. ևն.» կրճատումներն ինքնին կը հասկցուին։

Մէջտեղ են իմ այս գրած տողերս զորբոս Պ. Գուրգէն չտեսներ եւ զիս կ'անուանէ «ինքնընտիր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ հայ հասարակութեան»—

Տեղը չէ՞ որ ես ալ իրեն դարձնեմ իր խօսքերը. «Զարմանա՞լ թէ զայրանալ, չը «գիտեմք, այս... ոչ-նորալուր ուղղամը-«տութեան վրայ։»

Վերոյիշեալ այդ նամակիս մէջ գրած եմ դարձեալ ինչ որ ըսի «ի հանդիսական առենին» թէ՝ «չաբաթ իրիկուն ընդունած նամակներս կը ծանուցանեն որ Պոլսի Հայոց մէջ անսահման խանդ և ոգեւորութիւն կը տիրէ»— Այս ըսածներուս հերքում տալը շատ դժուար է։ Եթէ ես լուէի «հեռագիրք և նամակք աղաղա-«կեսցեն»։

Հեռագիրներն ու նամակները կը տեղան ի Վենետիկ, ուղերձը ստորագրուած է «Ոչ դատակարգէ» հայերէ, Պոլսոյ մէջ ստորագրութիւն կը բացուի Հ. Ալիշանի յոբելեանին առթիւ, այդ նուիրատուութիւնը մասնակցի նոյն իսկ... Պ. Ռէթէոս Պէրպէրեան, և սակայն այս ամէն ցոյցեր չեն կրնար համարուիլ նշաններ խանդի և ոգեւորութիւն, ինչո՞ւ. —հաւանօրէն այն պատճառաւ որ Պ. Գուրգէն զլացած է իր մասնակցութիւնը այդ ցոյցերու։

Պ. Գուրգէն կ'ըսէ խօսելով իմ յուզումս վրայ.

«Բայց իսկ՛ւ չը խաւնէր՝ իւր յուզեալ «ասացուածոց մէջ՝ բառեր և բացատրու-«թիւններ որ կը ծակծկեն Հայաստան-«եայց եկեղեցւոյ ճշմարիտ զաւակաց «սիրտը»։

Եւ ի՞նչ են այն խօսքեր որք կը ծակեն ու կը ծակծկէին սրտերը. ահաւասիկ իմ հետեւեալ խօսքերն են եղեր.

«Ս. Ղազար կեդրոն կը դառնայ ընդ-«հանուր Հայութեան սրտի բաբախումներու։»

«Էջմիածնէ ի Հռոմ ամէնքն հայ էին։

Եւ Պ. Գուրգէն կը հարցնէ.

«Մխիթ՞»։

Ուրեմն հայ չէին, ի՞նչ էին, Հօթենթացի՞... թէ Գուրգէն։

Սակայն այս մասին ալ խօսելու համար պէտք էր որ Պ. Գուրգէն ամբողջո՞վին առաջ բերէր իմ խօսքերս որք հետեւեալներն են։

«Կատարելապէս ազգային էր հան-
«դէպն արդարեւ, առաջին անգամն էր,
«յորմէ հետէ հիմնարկուած է Մխիթար-
«եաններու վանքն, որ Ս. Ղազար կեդրոն
«կը դառնայ ընդհանուր հայութիւն սրտի
«բաբախումներու։ Երէկ՝ Հայոց համար
«ո՛չ կրօնքի խտրութիւն կար, ո՛չ քաղա-
«քի տարբերութիւն, ո՛չ տեղի զանազա-
«նութիւն, այլ միայն հայութեան կար.
«Էջմիածինն ի Հռոմ ամէնքն հայ էին։

Պ. Գուրգէն կրնա՞յ ըսել թէ այդ օր Ս. Ղազարու վանքը չէր եղած կեդրոն մը հայ սրտի բաբախումներու։ Թիֆլիզի թերթերն ի՛նչ գոյն, ինչ ուղղութիւն ալ ունենան, նոյն իսկ անոնք որ սարսափելի կ'ատեն կաթոլիկ հայերն, այդ օրն Ալիշանի նուիրուած էին. Արարատի, Կովկասի, Անդրկովկասի, Ռուսաստանի ամէն անկիւն ուրախութիւն կը կատարուէր այդ օրն ի պատիւ Ալիշանի, և հեռագիրներն ու նամակներ կը տեղային ի Ս. Ղազար։ Հայաբաւան հայ եկեղեցականն, կաթոլիկ հայ եկեղեցականին հետ կ'ստորագրէր միևնոյն շնորհաւորական հեռագրին ու նամակին ներքեւ. կ'ստորագրէին միևնոյն հեռագրին ու նամակին ներքեւ կաթոլիկ աշխարհականն ու լուսաւորչական աշխարհականը։ Հաղեղարիայէն ու Գահիրէէն, Մանչէսթրէն ու Տրապիզոնէն, Սամսոնէն ու Պոլիսէն ամէն կողմէ միևնոյն խանդն ու աւիւնը կը սուրան, կը սլանան ի Ս. Ղազար. ամէն ոք հայ է. և մի Գուրգէն միայն կը զարմանայ ու կը հարցնէ «մթէ՞»։

Եթէ Պ. Գուրգէն պախարակէր այս ցոյցերն այդ ուրիշ խնդիր կ'ըլլար, բայց զայն ուրանալու համար պէտք է ունենալ մտքի այնպիսի կազմակերպութիւն մը որ մեզ անբացատրելի է։

Ի՞նչու համար այս իրողութիւն պիտի ծակծկէ սիրտն «ճշմարիտ զաւակաց Հայաստանեայց եկեղեցւոյ»։— Պ. Գուրգէն վեհմօրէն կ'ըսէ—իրը թէ նոր բան իր կողմէ ըսած ըլլար — «Հայութեան սիրտն միշտ կը բաբախէ և պիտի բաբախէ Էջմիածնի համար»։—մթէ մին միւսին արդե՞լք է։ Ամէն օր մեր եկեղեցին կը յիշատակէ Սեղբեսարոս Պապը. մթէ այդ յիշատակութիւն կը նսեմացնէ՞ զԼուսաւորիչը։

Ազգ մը կը պահպանուի շատ մը պայմաններով և ո՛չ թէ լոկ եկեղեցիով։ Հայ ազգին սիրտ կրնայ բաբախել ի յիշատակ Սօսեայ անտառին և Էջմիածնի անտառին, հեթանոս նահապետի մը և քրիստոնեայ հայրապետի մը համար, Սիսի և Էջմիածնի համար ալ. ազգանուէր Մխիթարեանի մը և ազգանուէր Արմաշցիի մը համար ալ։

Նոյն իսկ իր այդ յոբելեանին օրն Հ. Ալիշան իր նոր հոյակապ գործովը ցնցում կուտար հայ սրտերու ներկայացնելով հրաշալի կերպով Ս. Էջմիածինը։

Տարօրինակ չէ՞ որ այն մարդիկ որք ամէն օր կը նախատեն Ս. Էջմիածնի գահակալը, որ ինչ ալ ըլլայ, Հայոց համար միշտ կաթողիկոս է և այսպէս հետամուտ են ատելի ընել Ս. Էջմիածինը Հայոց սրտին, զայն ցոյց տալով իրը կեդրոն մը ռուսականութեան, նոյն այդ անձինք զայրոյթ յայտնեն մի վարդապետի համար որ Էջմիածինը հրաշալի կերպով կը ներկայացնէ ցիրուցան Հայոց սրտի ու մտքին առաջ։

Բայց Պ. Գուրգէնի այս ամէն, իրը թէ ազգասիրաբար խօսքերուն, ամենէն լաւ պատասխանը կուտայ նոյն իսկ իրենց թերթը նոյն իսկ իրենց Աշեռելեան Մամուլը։

Ահաւասիկ ինչ որ Աշեռելեան Մամուլ կ'ըսէր խմբագրականով մը Հ. Ալիշանի Յոբելեանին առթիւ։

«Այս հոյակապ անունն՝ որու առջեւ
«կը պատկառի ամէն Հայ ինչ դասանուանեան
«և համոզման որ պարծանք, անաստարակոյս ու-
«նի դիւթիչ շնորհ մը, խնկաւէտ բոյր մը,
«բնածին հրապոյր մը որ Հայոց սիրտն ու
«միտքը կը յուզեն, կը գրաւեն ու կը
«յափշտակեն։ Հ. Ալիշանի անուամբ հա-
«յութեան հոգւոյն նրբագոյն թելերը
«շարժող սրտաշարժ բանահիւսութեան,
«զուտ հայրենասիրութեան և խորին հըմ-
«տութեան քաղցրալուր ու ծանր շեշ-
«տերն են որ յառաջ կը բերեն այդ հմայ-
«քը ու յափշտակութիւնը։

«Ո՛չ Մխիթարեան, ո՛չ միաբանական
«և ո՛չ դասանական է այդ պատկեր, այլ
«համազգային և հայկական՝ որու կը յառին
«ակնապիշ Հայ սրտեր, և սիրով, լուսով
«ու յուսով կը ներշնչուին ու կ'ոգեւորին։

«Ինչպէս հին, նոր ազգեր սովոր են

«արձաններ կանգնել բարերար մեծ հոգի-«ներու, Հայք Հ. Ալիշանի հայրենանուէր «և փառաւոր գործունէութեան համար «ունին առ այժմ երախտագիտութեան «որտաբոյր խունկ՝ որ թերեւս ուելի ա-«խորժելի պիտի գայ համեստաշուք նա-«հապետին քան թէ պաղ մարմարն ու «պղինձն»։

Այսպէս ուրեմն խաբուած են ամէնքն ալ Աբէ-Եէլ, ու Աբէ-Եէլեան Մատուռ, Մշոյ ու Արյուքան, աշխարհիս բոլոր հայերն, և միայն անսխալ կը մնայ Պ. Գուրգէն։

Նոյն իսկ գրական Յորելեանն ալ պէտք չէր խանդիւ տօնել։

Ինչո՞ւ։

«Ինչու»ին կը պատասխանէ Պ. Գուրգէն այդ յօդուածի մէջ ծանօթութեամբ մը, որ հետեւեալն է.

«Աւելորդ չէ ասա յաւելուլ՝ թէ շատ «կարեւոր բան կայ ի հաշիւ առնլու Հ. «Ալիշանի նոյն իսկ գրական Յորելեանին «մասնակցութեան ժամուն մէջ, Հայաս-«տանեայց եկեղեցւոյ զաւակաց համար «անշուշտ, վասնզի Հ. Ալիշանի Նէրսէս «Շնորհալի և Պարապայ Ի-ը հրատարակու-«թիւնն, որ ընդդէմ է ճշմարտութեան «և Հայաստանեայց եկեղեցւոյ վարդա-«պետութեան, մթագոյն ստուեր մը կ'ա-«ձէ Հ. Ալիշանի՝ որպէս ազգային պատ-«մագրի՝ ճշմարտութեան վրայ։ Մեր ե-«կեղեցական հարք ոմանք շատ աճապա-«րած են, որպէս կ'երեւի, իւրեանց շնոր-«հաւորութեանց և բարեմաղթութեանց «մէջ»։

Նախ ըսեմ թէ՝ Հ. Ալիշանի այդ գիրք նոր հրատարակութիւն մը չէ, որպէսզի կարելի ըլլայ ենթադրել թէ «մեր եկեղեցական հարք ոմանք, զայն կարդացած չըլլան և անգիտաբար աճապարած ըլլան իւրեանց շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց մէջ»։

«Նէրսէս Շնորհալի և Պարապայ Ի-ը» հրատարակուած է 1875ին և այդ թուականէն մինչեւ 1890 Մայիս 13 անցած են տասն և հինգ տարիներ. կարծեմ թէ այսքան ժամանակամիջոց մը բաւական էր «մեր եկեղեցական հարց ոմանց» հանդարտօրէն այդ գիրք կարդալու և չ'ճապարելու «իւրեանց շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց մէջ»։

Բայց ի՞նչ է ընդդէմ Հ. Ալիշանի ամբաստանութիւնն, զոր ոմանք եղեր ըրած, կ'արձկեն Հ. Ալիշանի դէմ, իբր դերագոյն նախատինք.

Պ. Գուրգէն սպէս կ'ամփոփէ այդ ամբաստանութիւն։

«Դատապարտելով կը դատապարտեմք «իւր (Հ. Ալիշանի) պատմական ինչ ինչ «խեղաթիւրումներն, ի մասին մանաւանդ «Ն. Շնորհալւոյ որպէս թէ հռոմէական «եկեղեցւոյ հպատակութեան անհիմն յե-«րիւրուածոյն»

Կարդացած չեմ այդ գիրք, հետեւաբար չեմ գիտեր թէ՝ ի՞նչ ըսած է Հ. Ալիշան. բայց թէ զայն կարդացած ալ ըլլայի կարող չէի գտնել անոր «պատմական ինչ ինչ խեղաթիւրումներ»։ Չեմ գիտեր շատ բան հնութեան վերաբերեալ, հետեւաբար չունիմ այն մեծ տաղանդը — որով օժտուած է անշուշտ Պ. Գուրգէն—որպէսզի կարենամ գտնել պատմական խեղաթիւրումներն Հ. Ալիշանի։

Նոյնպէս չունիմ նաեւ Պ. Գուրգէնի մեծ, գերբնական բարոյականը որով համարձակիմ ստոյգ անուանել Հ. Ալիշանի նման գերագոյն կերպով առաքինի անձ մը։ Հետեւաբար այս խնդրի մասին պիտի խօսիմ իբր մարդ մը որ պարզապէս կը տրամաբանէ, առանց ո՛ և է յաւակնութեան, յաւակնութիւն գիտական, յաւակնութիւն բարոյական։

Հ. Ալիշան երբեք պատմական խեղաթիւրում չկրնար ընել, վասն զի այնպիսի քրիստոնեայ, խղճամիտ, և պատուի տէր անձ չէ կարող խաբեբայ ըլլալ. ով որ խեղաթիւրում կ'ընէ նա խաբեբայ է։

Եթէ կարելի ըլլար ենթադրել թէ՝ Հ. Ալիշան ընդունակ է ընել այդպիսի խաբեբայութիւն, միւս կողմէ հարկ է մոռնալ թէ՝ այնքան միամիտ է՞ այդ մեծ տաղանդաւոր գիտնականն որ մտքէն չանցնէ թէ՝ խեղաթիւրում մը, մանաւանդ Շնորհալիի նկատմամբ խեղաթիւրում մը, անմիջապէս չհերքուիր ուրիշ պատմաբաններէ։ Ուրեմն ի՞նչ բանի օգուտ է սուտ մը, կամաւոր սխալ մը որ երեւալուն պէս պիտի հերքուի։

Սակայն չեմ գիտեր թէ տասն և հինգ տարիներու մէջ լրջաբար հերքում տրուեցա՞ւ Հ. Ալիշանի Շնորհալի Ի պարապայ Ի-ը գրքին։

Հ. Ալիշան խղճամիտ պատմաբան է. ինչ որ կը գրէ զայն կը հաւաքէ յիշատակարաններէ, պատմական գրուածներէ, ձեռագիրներէ։ Կարելի չէ որ նա մտքէն դէպք մը ստեղծէ, կամ պատմուած դէպք մը հրատարակէ խեղաթիւրուած։

Հ. Ալիշան պատմութիւնը չգոհեր կաթոլիկութեան. Սիսուանի մէջ չէ յիշատակած կաթոլիկներու կիլիկեան կաթողիկոսութիւնը, վասնզի այդ կաթողիկոսութիւն չունի պատմական հիմ։ Ոչ խըզ-

ճամիտ պատմարան մը պիտի գրէր տարբեր կերպով։

Շնորհալիի դարը տարբեր դար մըն էր։ այն ժամանակի մեր գրութիւնը կը ներէր մեզ հաստատել աւելի սերտ յարաբերութիւններ քրիստոնեայ ուրիշ եկեղեցիի մը հետ։ Մեր ազգային շահերն այժմ կը պահանջեն որ քրիստոնէութեան մէջ կղզիացեալ դիրք մը ունենանք, եւ իբր հետեւութիւն այդ պահանջին կը հանդիսանանք թշնամի այն եկեղեցիներուն որք կ'ուզեն զմեզ իրենց մօտեցնել։ Եթէ այժմ ամէն եկեղեցիներու հակառակորդ ենք երբ կ'ուզեն զմեզ դրաւել, մասնաւորապէս անհաշտ թշնամի ենք կաթոլիկութեան, վասնզի կաթոլիկութիւնն ալ —իր Պօլսի ներկայացուցիչներու միջոցաւ մասնաւորապէս— հանդիսացած է անհաշտ թշնամի մեր ազգութեան։

Սակայն երբ խնդիրն անցեալի վրայ է պէտք չէ որ մեր արդի գաղափարներու, զգացումներու, գայրոյթի համեմատ քննենք անցեալը։ Անցեալին մէջ կան շատ դէպքեր որք կրնան չհամապատասխանել մեր արդի շահերուն, բայց միթէ այս պատճառաւ կը դադրի՞ն գոյութիւն ունենալէ։

Հ. Ալիշան ընդօրինակած է Վատիկանի գրադարանէն շատ մը թուղթեր որք ժամանակաւ փոխանակուած են Կիլիկիոյ կաթողիկոսներու, աշխարհական պետե, րու, և Հռոմի պապերուն միջեւ։ Այդ թղթակցութիւններ վերին աստիճանի հետաքրքրական են և շահեկան մեր պատմութեան համար. սակայն Հ. Ալիշան չուզեր զանոնք հրատարակել, վասն զի հայադաւան հայոց անախորժ է.

Երբ այս փափուկ դիտողութիւնն ինձ ըրաւ Հ. Ալիշան, շատ ցաւ զգացի։ Պատմական յոյժ կարեւոր ուսումնասիրութիւններէ պէտք է զրկուած մնալ, վասն զի հայոց մէջ Պ. Գուրգէնի մոքով մարդեր կը գտնուին։

—Ո՛չ, ըսի, իրաւունք չունիք զմեզ զրկել այդպիսի հետաքրքրական յիշատակարաններէ. ինչ որ պատմութիւն է, պատմութիւն է։ Պէտք է զայն դիտնանք, իսկ թէ անոնցմէ ինչպէս պէտք է օգտըլինք, կամ թէ ինչպէս պէտք է անոնք մեզ առաջնորդ ըլլան, այդ տարբեր խնդիր է։

Ցուսանք թէ Հ. Ալիշան այդ յիշատակներն հրատարակելու շնորհը կ'ընէ, առանց նկատողութեան առնելու պաշտօնական ոգիներու բացագանչութիւնները։

Անցեալը զմեզ չհարկադրեր որ զայն մեզ օրինակ առնենք։ Մեր կրօնական նախնիքներու սերտ յարաբերութիւնները Հռոմէական կամ Յունական եկեղեցիներու հետ, պատճառ մը չէ որ մենք ալ այժմ այդպիսի յարաբերութիւններ ունենանք։ Տարբեր շահեր, տարբեր նկատողութիւններ ունինք։

Պ. Գուրգէն անդամ եղած է այն Մասնախմբին որ պիտի տօնէ Պ. Գարագաշեանի յոբելեանը։ Իր ժամանակին կը խօսուի թէ ի՞նչ ըրած է Պ. Գարագաշեան որ իրաւունք մը ունենայ ազգային երախտագիտութեան, կամ սքանչացումի բացառիկ ցոյցի մը. այժմ այսքանը կ'ըսենք թէ՝ Պ. Գարագաշի միակ գործն է Բնական պատմութիւնը որ կ'ուշնչացնէ մեր անցեալն։ Արդ ի՞նչ պէտք է մնածենք. Պ. Գարագաշ հիմնական փաստեր ունի՞ թէ ոչ. ահա մեր փնտռելիքն։ Այս խնդրին վրայ կը վիճին գիտնականներն, որք կը կարծեն թէ Պ. Գարագաշի գիտութիւնն այնքան սահմանափակ է որ չէ կրցած հասկնալ Խորենացին. Պ. Գարագաշ կրնայ հակառակը պնդել։ Բայց ի՞նչ պիտի ըսէին մեզ թէ թշնամի հանդիսանայինք Պ. Գարագաշի, պարզապէս այն պատճառաւ որ կը հերքէ զԽորենացին, առանց քննելու թէ Պ. Գարագաշի ըսածն հիմնուա՞ծ է դիտական հետազօտութիւններու վրայ։

Սակայն չզարմանա՞նք թէ, ինչպէ՞ս Պ. Գուրգէնի պէս «ազգասէր» մը որ՝ ամէն ինչ, պատմութիւն, աւանդութիւն, կ'ուզէ հպատակեցնել ազգասիրութեան օրէնքներուն, կը հետամտի տօնել մի գիտնական որ կ'ուզէ ցոյց տալ այնպէս իբր թէ՝ Մովսէս Խորենացին, մի խարերայ ստախօս էր։

Մովսէս Խորենացին մեր ազգութեան համար Շնորհալիէն նուազ կարեւոր չէ, և սակայն Պ. Գուրգէն կուզէ տօնել յոբելեանն անոր որ այդ մեծ անձնաւորութիւնը կը հռչակէ խարերայ, ստախօս ոմն։

Մի թէ Պ. Գարագաշ հայադաւան է՞ որ Պ. Գուրգէն կ՚ուզէ տօնել անոր յոբելեանը,

Այս հակասութիւններն այսչափով չեն վերջանար։ Փոքրիկ պատմութիւն մը պատմեմ։

Երկու տարի առաջ Պոլիս եկաւ Մխիթարեանց Աբրահայրն. կիրակի օր մը պատարագեց Օրթագեղի եկեղեցիի մէջ. պատարագէ վերջ գնաց դպրոց, ուր կաթոլիկ Հայերու կողմէ բարեմաղթութիւններ եղան ու ճառեր կարդացուեցան։

Այդ պատարագին և այդ հանդիսին ներկայ գտնուած է նաեւ մի հայադաւան հայ, Յ. Գուրգէն անունով, որ չբաւականանալով ներկայ գտնուիլ կաթոլիկ եպիսկոպոսի մը պատարագին, չբաւականանալով երթալ կաթոլիկ հայերու հետ կաթոլիկ Հայոց դպրոցը, «պարտ անձին» կը համարի ճառ մըն ալ կարդալ ի պատիւ կաթոլիկ եպիսկոպոսի մը, որ այդ օրուան պատարագովը անշուշտ չէր տօներ իր դրական գործունէութեան յոբելեանը։

Այդ ճառին մէջ Պ. Գուրգէն դրուատած է Հ. Ալիշանը «ոսկեդարեան հայկաբանութեամբ» և խնդրած է աբբայհայրէն ասնել ջերմագին համբոյրներն Հ. Ալիշանի ձեռաց,

Այն ձեռաց որ...

Այն ձեռաց որ...

Այն ձեռաց որ...

Այսպէս մի առ մի թուած է այն ձեռքերէն ելած գործերն. արդեօք այդ օրը չյիշե՞ց թէ այդ ձեռքերը գրած են նաեւ այն գիրք որ «մթագոյն ստուեր մը կ՚ածէ Հ. Ալիշանի՝ որպէս ազգային պատմագրի՝ ճշմարտութեան վրայ։»

Պ. Գուրգէնի այդ աւուր ճառը և Հայրենիքի մէջ հրատարակած յօդուածը իրարու բաղդատելով չըսե՞մ, «զարմանա՞լ «թէ զայրանալ» չգիտեմ այս նորալուր «կատակերգութեան վրայ։»

Պ. Գուրգէն կը յիշեցնէ թէ՝ Ներսէս Պատրիարքի թաղումին կաթոլիկ Հայոց կողմէ պաշտօնական ներկայացուցիչ չկար, և թէ Իգնատիոս Պատրիարքի յուղարկաւորութեան օրը փակ մնացած են Ոսկեբերան եկեղեցիի դռները։

Ես ալ կը հարցնեմ. —Եթէ Պէշիկթաշլեան մեռնէր այս օրերս արդեօք պիտի չերթայի՞նք իր թաղումին, ըսելով թէ կաթոլիկ Հայոց Պատրիարքարանը ոչ ոք ղրկած է Ներսէս Պատրիարքի թաղումին։

Ի՞նչ փոյթ մեզ կղերականներու խաւարամտութիւնը։ Մենք այդ խաւարամտութեանը դէմ կը մարտնչինք, և խաւարամտութեան յաղթելու համար պէտք է խաւարամի՞տ ըլլալ։

Հայ եկեղեցիի անհամեմատ առաւելութիւնը կաթոլիկ եկեղեցիի վրայ ո՞ւր կը մնար, եթէ մենք ալ հետեւէինք ասոր օրինակին։

Ինչ որ կը պահարակենք, զայն չենք կրնար մեզ օրինակ առնել։

Իսկ երբ Պ. Գուրգէն կը խօսի կորուսեալ գաղթականներու վրայ պարզապէս ցոյց կուտայ թէ կարող չէ ինքնիրենը բան մը մտածելու և ինչ որ ըսուած է ուրիշներէ հազարաւոր անգամներ, զայն կը կրկնէ, առանց նոր բան մը մտածելու։

Այն գաղթականութիւն կը կորնչի իբր ազգութիւն. ո՛չ կրօնքը, ոչ մի ինչ կրնայ պահպանել զայն։

Չեմ գիտեր թէ հա՞րկ է որ Պ. Գուրգէնի միւս մանր մունր ըսածներուն ալ պատասխանեմ։

Այսքանն ալ գուցէ աւելորդ ըլլար գրել, բայց պէտք էր որ միանգամ խօսուէր այս խնդրին վրայ։

Ինձ ըսին ըլլօրէն խօսիլ, գէթ միանգամ, Պ. Գուրգէնի հետ. այնպէս ըրի. մեզքն անոնց վիզն որ այսպէս ընել տուին ինձ, ապա թէ ոչ ունէի բաւական ծիծաղելու նիւթ այն անձին համար որ ուրիշները կ՚անուանէ խեղկատակ, ազգատեաց, խեղաթիւրող, տգէտ, անխոհեմ։

Ա. Ա.

Արտօնատէր

Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ